





www.eGrabar.com

Թուայնացման համար





Կ Ո Մ Ի Տ Ե Ս

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

ԱՂ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

*Library
of
Nabucc
15/12/99*

ԿՈՄԻՏԱՍ

(1869—1969)

ԱՍՈՒՅԹՆԵՐ * ԶԱՂՎԱԾՔՆԵՐ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Министерство культуры Арм. ССР
Государственная республиканская библиотека
им. А. Ф. Мясникяна

КОМИТАС
(1869 — 1969)

Сборник методических и библиографических материалов
Собрал и составил А. П. ШАХАЗИЗЯН
Редактор: С. Г. Гаспарян
Ереван — 1969
(На армянском языке)

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

Հայ ազգային դասական երաժշտության հիմնադիր Կոմի-
տասի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական տո-
նահանդեսները համաժողովրդական նշանակություն ունեն
մեր աշխատավորության համար:

Շատ բարձր գնահատելով հանճարեղ կոմպոզիտորի
հսկայական ծառայությունները մեր երաժշտական մշակույ-
թի բոլոր բնագավառներում և նրա հոբելյանը արժանավա-
յել կերպով նշելու նպատակով, ստեղծված է կառավարա-
կան հոբելյանական հանձնաժողով, որը մշակել է միջոցա-
ռումների մի ընդարձակ ծրագիր:

Հանրապետության պետական, հասարակական և ստեղ-
ծագործական կազմակերպությունները երախտագիտության
խորին զգացումով վաղուց արդեն ձեռնամուխ են եղել Կոմի-
տասի ծննդյան 100-ամյակին նվիրված այդ միջոցառում-
ների կենսագործմանը:

Սովետական Միության բոլոր եղբայրական հանրապե-
տությունները, նույնպես, նախապատրաստվում են արժա-
նավայել կերպով տոնելու հայ ժողովրդի մշակութի այդ
պատմական տարեթիվը:

Հայրենասիրական խանդավառությամբ ու սեփական
նախաձեռնությամբ, սիյուռքահայ աշխատավորության գրա-
կան ու գեղարվեստական առաջադիմական կազմակերպու-
թյունները նույնպես անում են ամեն ինչ՝ փառքով ու շու-
քով տոնելու այդ համազգային մեծ տարեթիցը: Դժվար է

թեկուզ մի պահ հայ երաժշտական մշակույթը պատկերաց-
նել առանց Կոմիտասի, առանց այն հոգեպարար ու գողտ-
րիկ երգարվեստի, որը բազում թելերով կապված է նրա
հանճարեղ կերտողի պայծառ ու շողշողուն անվան հետ:

Կոմիտասն իր բազմաբեղուն գործունեությամբ դարա-
գլուխ կազմող մեծությունն է: Նա հանդիսանում է մեր ազ-
գային երաժշտական մշակույթի խիղճը, նրա շողշողուն
աստղը, որից լուսավորվել և դեռ լուսավորվելու են շատ
սերունդներ: Հայ երաժշտության երկնակամարի վրա այդ
պայծառ աստղի երևալը բացառիկ նշանակություն ունեցավ
պատմական օրինաչափությամբ սկիզբ առած ժողովրդական
ստեղծագործության թանկագին արժեքների վեր հանման ու
գնահատման գործում:

Բազմադարյան հայ երաժշտության պատմության մեջ
ժողովրդի բնորոշ ոգին ու բնավորությունը, նրա վիշտն ու
ուրախությունը, իր գոյության համար մղած մահու և կենաց
պայքարը, նրա ապրած ողբերգությունը՝ ամենից ավելի
իրենց բազմակողմանի և խոր արտացոլումն են գտել հան-
ճարեղ Կոմիտասի ռեալիստական ստեղծագործությունների
մեջ: Դրանք իրենց թեմատիկ ու ժանրային բազմազանու-
թյամբ և բազմերանգությամբ հանդիսացան Կոմիտասի
ստեղծագործության հորդառատ աղբյուրը, նրա գիտահե-
տագոտական մտքի անկյունքարը:

Հայ երաժշտական մշակույթի անցյալի, ներկայի և
ապագայի բազում հոգսերով այրվող Կոմիտասն իր փառա-
հեղ գործունեությամբ և նորարարական անօրինակ խիղա-
նումներով նշանավորեց հայ երաժշտության մի նոր շրջան:
Ղգգային պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման, կազ-
մավորման մի շրջան, երբ հայ հասարակության տարբեր
շավերի, առանձնապես մտավորականության մեջ օրակար-
ի անհետաձգելի հարց էր դարձել ազգային մշակույթի զար-
ացումն ու պրոպագանդումը:

Կոմիտասը որպես խոշոր ստեղծագործող ու գիտնական,
9-րդ դարի 90-ական թվականներից պայքարի ելավ հայ

երաժշտության ինքնության ու ինքնատիպության համար:
Ամենուրեք նա ապացուցեց, որ հինավուրց ու բարձր մշա-
կույթի հասած իր ժողովուրդը մյուս քաղաքակիրթ ժողո-
վուրդների նման ունի իր ազգային լիարժեք երաժշտությու-
նը, որն անցնելով զարգացման երեք հիմնական — «ման-
կության, պատանեկության և հասունության» շրջանները՝
փարթամորեն ծաղկել, հասել է մինչև մեր օրերը:

Բացառիկ մեծ է Կոմիտասի դերը: Նա ոչ միայն ալա-
նավոր կոմպոզիտոր էր, գիտնական, մանկավարժ, երգիչ,
դիրիժոր-խմբավար ու արտիստ, այլև երաժշտական-հասա-
րակական գործիչ, հրապարակախոս ու հայրենասեր քա-
ղաքացի: Մեծ երաժշտագետն իր բազմաբեղուն գործունեու-
թյունն առանց մնացորդի ծառայեցրեց ժողովրդական երա-
ժշտության խոր և բազմակողմանի ուսումնասիրության ու
պրոպագանդման շնորհակալ գործին: Գալիք սերունդները
երախտագիտությամբ են հիշելու մեծ հումանիստ ու լու-
սավորիչ Կոմիտասի ժողովրդայնությամբ հաղեցած հոյա-
կապ արվեստը, նրա բազմաբովանդակ գործունեությունը:

Կոմիտասը որպես իր ժամանակի ալանավոր երաժշտա-
կան-հասարակական գործիչ մշտապես գտնվել է հայ պար-
բերական մամուլի ուշադրության կենտրոնում: Քիչ չեն նաև
նրա մասին օտար մամուլում եղած հոդվածները, տեղե-
կություններն ու ինֆորմացիաները, որոնք տարբեր առիթ-
ներով անդրադարձել են նրա գործունեությանը:

Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ հանրապետու-
թյան կուտուր-լուսավորական ցանցի աշխատողներին գործ-
նական օգնություն ցույց տալու նպատակով Ալ. Մյասնիկ-
յանի անվան հանրապետական գրադարանի գլխավոր մա-
տենագետ, վաստակավոր գրադարանավար Ալբերտ Շահա-
ղիզյանի կազմած այս մատենագիտական յուրատեսակ տե-
ղեկատուն կարող է շատ օգտակար լինել ոչ միայն այսօր,
այլև հետագայում:

Այս ժողովածուում ղետեղված Կոմիտասի աշխատու-
թյուններից բերված քաղվածքները, համառոտ կենսագրա-

կան տվյալները, մատենագիտական տեղեկությունները, ժամանակակիցների ու հետնորդների՝ գրականության, արվեստի ականավոր գործիչների ասույթներն ու մտքերը Կոմիտասի բազմաբովանդակ գործունեության մասին՝ առատ նյութ կարող են տալ ոչ միայն գրադարանավարներին, այլև ակումբային, կուլտուր-լուսավորական հիմնարկների, մամուլի աշխատողներին: Հենց այդ ասպարեզի մատենագետները կոչված են խելացի ու նպատակահարմար ձևով զուգորդելու վաղօրոք համատեղ մշակված աշխատանքային պլանները և այն միջոցառումները, որոնք առնչվում են Կոմիտասի հոբելյանական օրերի հետ:

Ժողովածուն գործիմաց կազմակերպիչներին լայն հնարավորություն է ընձեռում հանդես բերելու թեմատիկ նյութի ընտրության ճաշակ, նախաձեռնություն՝ նպատակային երաժշտական, գրական-գեղարվեստական հետաքրքիր ու բովանդակալից հանդեսներ և այլ միջոցառումներ կազմակերպելու գործում:

Հանրային գրադարանի կողմից կատարված այս շնորհակալ աշխատանքը արժանի է ամենայն խրախուսանքի:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՆԵՐԻՆ

Հանճարեղ Կոմիտասի ծննդյան 100-ամյալը մեծ ու հաճելի պարտականություն է դնում յուրաքանչյուր գրադարանավարի վրա՝ ըստ արժանվույն նախապատրաստվելու, աշխատավորության լայն շրջաններում, կուլտուր-լուսավորական մյուս հիմնարկների հետ միասին բազմազան միջոցառումներ անցկացնելու այդ նշանավոր տարեթվի առթիվ:

Կոմիտասի անունը թանկ ու հարազատ է յուրաքանչյուր հայի սրտին: Կոմիտասյան հոգեհարազատ մեղեդիներով են լցված մեր սրտերը: Այդ մեր ժողովրդի բազմադարյան պատմությունն է՝ հուզաթաթալ հնչյունների կենդանի ու գունեղ պատկերների լեզվով արտահայտված:

Կոմիտասը, — ինչպես Իսահակյանն է նկատել, — լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ. նրա խեղդված վիշտը, իրավազուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը:

Աշխատանքի ու սիրո, դարիքի ու հարսանեկան, վշտի ու կարոտի կոմիտասյան այդ երգերը, ուր մարդկային ազնիվ զգացմունքներն են բյուրեղացած, շաղախված են անցյալ կյանքի թախիժով և պայծառ օրերի լուսավոր հավատով: Մեր հոգու, մեր մտքի, մեր խոհերի արձագանքն են այդ երգերը, մեր կյանքի հավերժ ուղեկիցը:

Ճանաչել Կոմիտասի կյանքը, ճանաչել նրա ստեղծա-

գործութիւնները, նշանակում է ավելի լավ և ավելի խորը ճանաչել ինքներս մեզ, քանի որ նա է հայտնագործել և մեզ վերադարձրել մեր ազգային երգը, հայկական երաժշտութիւնը: Համազգային մեծութիւնն է Կոմիտասը և նրա ծնընդյան հարյուրամյակը առիթ պետք է լինի համակողմանիորեն ճանաչելու այդ մեծութիւնը:

Շատ գրքեր են գրվել Կոմիտասի մասին ու դեռ էլի կգրվեն: Այդ գրքերի մի մասը ժամանակակիցների ու նրա աշակերտների հուշերն են՝ մեծ մասը ժամանակի մամուլի էջերից քաղված: Մյուս մասը՝ գիտական հոգւածներ ու մենագրութիւններ են, որոնք վերլուծում, արժեքավորում են մեծ երաժշտագետի ստեղծագործութիւնները:

Այդ ստվար գրականութեան մի մասն էլ գեղարվեստական ստեղծագործութիւններ են՝ չափածո և արձակ գործեր, բանաստեղծութիւններ, պոեմներ, վեպեր, պիեսներ:

Հրապարակի վրա, սակայն, այսօր քիչ գործեր կան, որոնցից կարող են օգտվել ընթերցողների լայն խավերը, քանի որ տպագրվել են տասնամյակներ առաջ, վաղուց արդեն սպառվել են և ոչ բոլոր գրադարաններում կարելի է գտնել այդ գրքերից, մանավանդ, եթե նկատի ունենանք նրանց փոքր տպաքանակը:

Անշուշտ, հոբելյանի առթիւ հրատարակվող և վերահրատարակվող գրքերը որոշ չափով կլրացնեն այդ բացը:

Բայց, մինչ այդ, գրադարանավարների ձեռքի տակ նյութեր են հարկավոր՝ ընթերցողների հետ աշխատանք կազմակերպելու համար, առանց որի շատ դժվար ու միակողմանի կլինի նրանց գործունեութիւնը: Ահա հենց այդ նպատակով էլ կազմված է այս գրքույկը, որն իր բնույթով մի ինքնատիպ տեղեկատու է, մի ծաղկաքաղ այն կարևոր նյութերից, ինչ լույս է տեսել Կոմիտասից և ինչ ասվել ու գրվել է նրա մասին թե՛ գրքերում և թե՛ մամուլում:

Եթե գրադարանավարը հմտորեն օգտվի այս գրքույկից, ապա նա շատ բան կարող է հասցնել ընթերցողին: Չմոռանանք ասել, որ գիրքը մնում է որպէս գիրք և այն պետք է

մշակվի սովորական գրքերի պէս, գրանցվի գրքամատյանում և ընթերցասրահում դրվի ընթերցողի տրամադրութեան տակ: Այդպէս պետք է վարվել հանրապետական գրադարանի հրատարակած նաև մյուս գրքերի հետ, քանի որ դրանք մի օրվա համար չեն և պետք են նաև հետագայում:

Այժմ դառնանք այն հարցին, թե ինչ միջոցառումներ կարելի է անցկացնել, ինչ կարելի է անել ընթերցողի համար՝ օգտվելով այս մատենագիտական տեղեկատուից:

1. Մի քանի էջում ժամանակագրական կարգով համառոտակի տրված է Կոմիտասի կյանքն ու ստեղծագործութիւնը: Առանձին մեքենագրելով կամ գեղեցիկ արտագրելով, գրադարանավարը այն կարող է փակցնել աչքի ընկնող տեղում, կամ Կոմիտասին նվիրված ցուցափեղկում: Էլ չենք խոսում, որ առանձին գրույցի նյութ կարելի է դարձնել այդ թեման, որը պետք է կազմակերպի գրադարանավարը ընթերցողական առանձին խմբերի հետ, ինչպէս գրադարանի ներսում, այնպէս էլ նրա պատերից դուրս:

2. Այդ նույն նպատակով կարելի է օգտվել այն քաղվածքներից, որ բերված են Կոմիտասի հոգւածներից և նրա մասին հայտնած կարծիքներից: Դրանք մեծ երաժշտագետի հայ և օտար ականավոր ժամանակակիցների, նրա աշակերտների և հետնորդների կարծիքներն են, բնութագրողները, վկայութիւնները, որոնք օգնում են այսօրվա ընթերցողին ավելի ընդլայնելու իր գիտելիքները Կոմիտասի մասին:

Այդ նյութերը գրույցներում, դասախոսութիւններում օգտագործելու հետ միասին պետք է լայնորեն ներկայացվեն նաև մյուս միջոցառումների ժամանակ: Ավելի բնորոշ քաղվածքներով ու ասույթներով հարկավոր է ձևավորել գրադարանը և այն դահլիճը, ուր Կոմիտասին նվիրված միջոցառում է անցկացվում: Ավելին: Կոմիտասյան այդ ասույթները և նրա մասին մեծ մարդկանց արտահայտած կարծիքները և կարևոր այլ քաղվածքները, գեղարվեստորեն ձևավորելով, պետք է փակցնել ո՛չ միայն գրադարանում: Դրանք կարելի

է տանել ավելի հեռուն, այնտեղ, որտեղ գրադարանը աշխատանք է կազմակերպում. ֆերմա, բրիգադ, արտադրամաս, հիմնարկ և այլն:

3. Այդ առատ նյութերից օգտվելով, պետք է կազմակերպել ճոխ ցուցահանդես: Այստեղ և կենսագրական տեղեկություններ կան, և զանազան քաղվածքներ, և նկարներ, և մատենագիտական ու այլ բնույթի տեղեկություններ, և ցանկեր, որոնց տեղյակ պիտի լինի ընթերցողը նաև ցուցահանդեսի միջոցով:

4. Արդյոք շատե՞րը գիտեն, որ Կոմիտասը գրել է նաև բանաստեղծություններ: Իսկ ո՞վ է կարդացել այդ բանաստեղծություններից գեթ մեկը: Եվ ահա, գրադարանավարը հաճելի նորություն կարող է մատուցել իր ընթերցողին: Գրքույկում բերված Կոմիտասի բանաստեղծությունների նմուշները պետք է անսխալ, մաքուր ու գեղեցիկ ձևագրով արտագրել և դնել ընթերցողի տրամադրության տակ: Որոշ գործեր փակցնել պատին: Այդ առթիվ կազմակերպել երեկո՝ «Կոմիտասը բանաստեղծ» թեմայով:

5. Միջոցառումների շարքում, ինչ խոսք, կարևոր տեղ են գրավելու Կոմիտասյան երեկոները: Դրանք բազմաբնույթ են ու բազմաբովանդակ: Ակումբի, կուլտուրայի տան հետ միասին կարելի է կազմակերպել համերգ-դատախոսություններ: Այդպիսի մի քանի երեկոյի նյութ կարելի է վերցնել այս ժողովածուից: Օրինակ շատ հետաքրքրական ու շահեկան կլինի «Հայ երգը հուզեց Եվրոպան», «Կոմիտասը Եվրոպայի նշանավոր արվեստագետների գնահատմամբ» և կամ մի այլ թեմայով, ուր փոքրիկ ներածականից հետո կատարվում են Կոմիտասյան մեղեդիներ, որոնք մի ժամանակ խորապես հուզել են Բեռլինի, Փարիզի, Լոզանի և շատ ու շատ քաղաքների բազմահազար ունկնդիրներին ու նշանավոր երաժշտագետներին:

Կարելի է կազմակերպել վիկտորինա, մրցույթ-երեկոներ՝ «Ինչ գիտեմ ես Կոմիտասի անունով», «Սրանք Կոմի-

տասինն են» և այլ թեմաներով: Այդ ամենի մասին գրադարանավարը շատ օգտակար բան կգտնի այս գրքույկում:

6. Գրադարանային աշխատանքում նշանակալից տեղ են գրավում նաև թեմատիկ քարտարաններն ու գրացուցակները:

Գրքույկի նյութերը լրիվ բավական են հետևյալ թեմաների համար. «Կոմիտասը գեղարվեստական գրականության մեջ», «Կոմիտասը հայ կերպարվեստագետների գործերում», «Հուշեր Կոմիտասի մասին» և այլն:

7. Վերջապես, շնորհակալ գործ է գրադարանավարների համար ընթերցողների լայն շրջաններին ծանոթացնել, եթե ոչ սպառիչ կերպով, ապա գեթ հիմնականում, այն ստեղծագործություններին (և նրանց հրատարակության հանգամանքներին), որոնք պատկանում են Կոմիտասի գրչին: Արդյոք բոլո՞րը գիտեն այն ստեղծագործությունների անունները, որոնք ձայնագրել, մշակել, ներդաշնակել է Կոմիտասը: Արդյոք բոլո՞րն են ծանոթ այն արժեքավոր, գիտական հոդվածներին, որ տպագրել է Կոմիտասը իր ժամանակի մամուլում:

Այդ նույն ձևով, ընթերցողներին տեղյակ պետք է պահել Կոմիտասի մասին լույս տեսած հոդվածներին ու գրքերին, որոնց համառոտ ցանկը տրված է այստեղ:

Էլի շատ բաների մասին կարելի է հուշել, որ պետք է կազմակերպեն գրադարանները, բայց հարկ չկա ամենը թվարկելու: Վաղուց արդեն այս ուղղությամբ աշխատանք տարվում է գրեթե մեր բոլոր կուլտուր-լուսավորական օջախներում: Հարկավոր է միայն ավելի բովանդակալից դարձնել այդ աշխատանքը:

Տեղեկատու-մատենագիտական այս նյութերի ժողովածուն, որ ընդառաջում է գրադարանավարների ցանկությանը, չենք տարակուսում, որ շոշափելի օգնություն կլինի հայ ժողովրդի մեծ երախտավորի՝ անմահ Կոմիտասի ծննդյան 100-ամյակը արժանավայել անցկացնելու գործում:



Հայրենի երգ մեր վսեմ,
Հաղարամյա մեր հանձար՝
Հազար զրկանք տեսած սև,
Հազար ոսոխ տեսած չար,—
Քեզ ժողովուրդն է խոնարհ
Տառապանքով իր անել,
Իր ավյունով պահել վառ,
Իր սրտի մեջ ընդունել:

Ե. ՉԱՐԵՆՑ



Եվ մեզանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչքուռը,
Այս խաչքուռը՝ քո՝ իսկ հերկի:

Ընդունիր դո՛ւ,
Դո՛ւ՝ մեր երգի
Մշտահնչուն նվագարան.
Ընդունիր դո՛ւ՝
Աեր ցաթուցիր
Մասունքների հավաքար՝ր.
Դու՝ խազերի մեր քերական,
Դու՝ հոգևոր մեր շարական.
Դու սրբազան
Մի ավազան,
Որ մեր հոգին ախտահանեց,
Դու՝ բիբլիական մի գավազան,
Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց.
Դու՝ մեր կարոտ ու մեր մորմոք.
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտարթուն
Անլուելի զանգակատո՛ւն...

Պ. ՍԵՎԱԿ

Ինձ համար չկա ուրիշ երկինք՝ քան իմ ժողովրդի հա-
րազատ հոգին:

Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացե՛ք և
սովորեցե՛ք նրանից:

Հայ երաժշտությունը ոչ միայն մեղկ ու տխուր չէ, այլ
համակ ուժ է և կենդանություն ու իր մեջ կանուցանե փի-
լիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երա-
ժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին, ամենեն
հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց
մեջ — կենդանի, — որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ, —
որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը:

ԿՈՄԻՏԱՍ

ԿՈՄԻՏԱՍ

(Սրբագործված տարեգրություն)

1869 սեպտեմբեր 26.


«Ծնվել եմ 1869 թվի սեպտեմբերի 26-ին, Փոքր Ասիայի
Կուտինա (Քյոթահիա) քաղաքում: Երրորդ օրն ինձ մկրտել
են և անունս դրել Սողոմոն:

Հայրս՝ Գևորգ Սողոմոնյանը, քյոթահիացի է, իսկ մայ-
րս՝ Թագուհի Հովհաննիսյանը, բուլսացի: Երկուսն էլ
հայ են:

Սնողներես մահից հետո ինձ՝ միամոր զավակիս, դաս-
տիարակել և ուսմանս մասին մեծ հոգ է տարել հորենական
տատս՝ Մարիամը: Մեր քաղաքի վարժարանը մի չորս բա-
ժանմունք ունեցող դպրոց էր: 1880 թվին ավարտեցի այդ
վարժարանը և հայրս իր մահից չորս ամիս առաջ, ինձ
ուղարկեց Բուրսայի վարժարանը: Դեռ տարին չբոլորած,
չորս մահվան պատճառով մեր քաղաքը վերադարձա...»:

Այսպես սկսեց իր մեծ կյանքի ուղին հանճարեղ Կոմի-
տասը: Շարունակենք այդ սրբագործված ճանապարհը նվի-
րական տարեթվերով:

1881 — Բուրսայի առաջնորդ Գևորգ վրդ. Դերձակյանը
կաթողիկոսի պահանջով «ձայնեղ» մի որբ աշակերտ պիտի
տաներ էջմիածին Գևորգյան ճեմարանում սովորելու հա-



«Ինքնակենսագրության» տիտղոսաթերթը

մար: Ներկայացված քսան աշակերտներից բախտը վիճակվում է Սողոմոնին:

Հայրը արհեստով կոշկակար էր, կենսուրախ մարդ: Իսկ մայրը՝ հոր հակապատկերը: Երկուսն էլ, սակայն, օժտված էին բանաստեղծական ընդունակություններով, երկուսի տոհմն էլ ձայնեղ էր: Նրանք հորինում էին երգեր ու եղանակներ, որոնք երկար ժամանակ երգվում էին համաքաղաքացիների կողմից:

Նորընծա ճեմարանականը հենց առաջին ուսումնական տարում աչքի է ընկնում իր ընդունակություններով, հատկապես երաժշտական արտակարգ շնորհքով: Նա երաժշտության և ձայնագրության դասեր է առնում շարականագետ Ղևոնդ եպիսկոպոս Տեր-Աստվածատրյանից, իսկ ավելի ուշ՝ նրա ուսուցիչներն էին Քրիստափոր Կարա-Մուրզան և Մակար Եկմալյանը:

1890 հունիսի 8—վեցերորդ դասարանի աշակերտ Սողոմոնը ձեռնադրվում է ավագ սարկավագ: Նա հոգով ու սրբտով նվիրվում է հայ երգին ու երաժշտությանը, տարվում ստեղծագործական աշխատանքով:

1891—քառաձայն խառն խմբի համար, հայկական նոտագրությամբ, Վաղարշապատում (Էջմիածին), լույս է տեսնում Կոմիտասի «Ազգային օրհներգը»:

1893 սեպտեմբերի 11—Ավարտում է ճեմարանի լսարանական լրիվ դասընթացը: Կաթողիկոս Խրիմյան Հայրիկի կողմից ձեռնադրվում է աթեղա, ստանալով Կոմիտաս անունը: Նրան է հանձնարարվում ճեմարանի երաժշտական դասերը: Կոմիտասը փոխարինում է իր ուսուցչին՝ Կարա-Մուրզային:

1894—Էջմիածնում հրատարակվող «Արարատ» ամսագրի 7-րդ և 8-րդ համարներում Սողոմոն Սողոմոնյան՝ Ս. Ս. ստորագրությամբ լույս է տեսնում Կոմիտասի «Հայոց եկեղեցական եղանակները» հոդվածաշարը:

Սա մի գիտական հմուտ ուսումնասիրություն էր՝ նվիրված հոգևոր երգերի ձևին ու բովանդակությանը: «Տաղ Հա-

րության», «Շարականների ձևն ու բովանդակությունը», «Շարականների և հոգևոր երգերի եղանակները», «Ութն ձայնի նրբությունները» և այլն:

1895 փետրվարի 26—Կոմիտասը վարդապետ է ձեռնադրվում, դառնալով էջմիածնի միաբան:

Վանքի պատերի ներսում դա այն աստիճանն էր, որից այն կողմ չբարձրացավ Կոմիտասը: Նա չէր ծնվել կրոնավոր դառնալու համար: Ժողովուրդը նրան աշխարհ բերեց իր դարավոր երգերը հավաքելու, հարազատ հայոց երգի, հայրենի մեղեդիների ճանապարհը գտնելու համար...

— «Շար Ակնա ժողովրդական երգերի» (Վաղարշապատ, 1891, 16 էջ): Այսպես էին կոչվում Կոմիտասի հավաքած ու հայկական ձայնանիշներով գրի առած այն 24 մեներգները, որ նա լսել էր 90-ական թվականների սկզբներին էջմիածնում գտնվող «Հնությունք Ակնա» արժեքավոր գրքի հեղինակ Հովսեփ Ծանիկյանից: Ժողովրդական երգի այս փառաբանումով, Կոմիտասն իր դեմ հանեց կղերականներին:

1895—1896—Ուղեկցելով կաթողիկոսին, Կոմիտասը լինում է Թիֆլիսում. այդ առիթը օգտագործելով, նա հարմոնիայի դասեր է առնում այնտեղ իր երգեցիկ խմբով անուն հանած Եկմալյանից, նախապատրաստվելով երաժշտական ուսումնարանի ընդունելության քննություններին:

1896—Կոմիտասը մեկնում է Գերմանիա՝ երաժշտական բարձրագույն կրթություն ստանալու: Բացի պրոֆ. Շմիդտի մասնավոր դասերին հետևելուց, երիտասարդ Կոմիտասը հետևում է Բեռլինի արքունական համալսարանի երաժշտափիլիսոփայա-պատմական դասընթացներին: Մի տարի հետո, Կոնսերվատորիայի նախապատրաստական դասարաններում Կոմիտասը երաժշտական-տեսական առարկաներ է դասավանդում:

1897—«Արարատ» ամսագրի № 7-ում տպագրում է «Հայոց եկեղեցական երաժշտությունը ժԹ դարում» ծավալուն ուսումնասիրություն, որը սակայն, չի շարունակվում հաջորդ համարներում և մնում է անավարտ:

— Ամսագրի այդ տարվա № 2 «Կոմ.» ստորագրությամբ պետեղված է «Տասն և վեց ձայն երգեցողություն պատարագի» գրախոսականը նվիրված էդուարդ Գրելլի հորինած տասնվեց ձայնով պատարագի կատարմանը Բեռլինում:

— Նույն այդ ամսագրի էջերում տպագրված են Կոմիտասի ինչպես էջմիածնական, այնպես էլ բեռլինյան ուսանողական շրջանի մի շարք հոդվածները, և մի ուսումնասիրություն՝ «Նյութեր 19-րդ դարի հայ երաժշտության պատմության համար» խորագրով:

1898—«Արարատ»-ի № 3—4-ում տպագրում է «Երգեցողությունք ս. պատարագի» գրախոսականը, նվիրված Եկմալյանի պատարագին:

1899 հուլիս — Համառ և տանջալից ուսման տարիները մնում են ետևում: Կոմիտասը ավարտում է Բեռլինի երաժշտանոցի և համալսարանի դասընթացները և որպես ավարտական աշխատանք ներկայացնում է «Քրդական երաժշտությունը» արժեքավոր ուսումնասիրությունը, որն այնքան մեծ հետաքրքրություն է առաջացնում Կոմիտասի անձի ու գործի շուրջը:

— Նույն տարին Բեռլինում Միջազգային երաժշտական ընկերության հրավերով Կոմիտասը դասախոսություն է կարդում «Հայոց եկեղեցական և աշխարհական երաժշտությունը» թեմայով: Հրապարակային իր այդ առաջին դասախոսության մեջ Կոմիտասը երաժշտական խոր հմտությամբ ցույց է տալիս հայ երաժշտության ինքնուրույնությունն ու նրա առանձնահատկությունները: Ընկերության խնդրանքով, շատ շանցած, Կոմիտասը կրկնում է իր այդ նշանավոր դասախոսությունը:

Գերմանական մամուլը հիացմունքով արտահայտվեց այդ դասախոսությունների մասին: Ահա թե ինչ է գրում Բեռլինի արքայական համալսարանի երաժշտության պատմության ուսուցչապետ, Միջազգային երաժշտական ընկերության նախագահ Օսկար Ֆլայշերը իր ողջույնի խոսքում.

«Ձեր հմտալից և խորիմաստ դասախոսությունների միջոցով մի խորունկ հայացք ձգել տվիք դեպի այն երա-

ժըշտությունը, որին Դուք ձեռնարկել եք, փոքր չէ եղել այն, և ես խոսած կլինեմ այն բոլորի անունից, որոնք Ձեր դասախոսությունները լսեցին,— և որոնց մեջ կային առաջնակարգ նշանակութիւն ունեցող և գիտական աշխարհահռչակ մարդիկ — եթե ասեմ, թե Ձեր ջանքն ու ճիգը զուր չեն: Դուք արդի գիտութեանն անգին ծառայութիւններ կարող եք մատուցել, եթե Ձեր աշխատութիւնները հրատարակեք, և այդ առթիւ, եթե կարողանամ օժանդակութիւնս ընծայել Ձեզ, մի մեծ ուրախութիւն պիտի զգամ:

Մեծագույն հարգանք Ձեր Օսկար Ֆլայշեր: Բեռլին, 19 հուլիսի, 1899 թ. »:

Ահա նույն ընկերութեան քարտուղար, արքայական համալսարանի ուսուցչապետ, դոկտոր Մաքս Զայֆերտի հիացական խոսքերը.

«Մեծահարգ տեր վարդապետ... Այն խորունկ հայացքը, որով Դուք մեզանից բոլորովին հեռու եղող բարձր ու զարգացած մի քաղաքակրթութեան վրեժ կարողութիւնը մոտիկից ճանաչեցրիք մեզ,— անակնկալ կերպով հմտալից այն բաների ներածութիւնը, որ արեւմտյան հնագույն քաղաքակրթական ժամանակների ծանոթութեան համար, իսկապես առանձնակի կերպով նշանակալից են, Ձեր դասախոսելու և երգելու կատարելագործ արվեստը — սրանք այնպիսի բաներ են, որոնք մեզ զարմացնել կարող էին և որոնք Ձեր ունկնդիրներից ոչ մեկի հիշողութեան մեջ չպիտի թառամեն: Սրանով Դուք ոչ միայն մատնաճյուղիս շնորհակալութիւնը, այլև ապահովաբար, Ձեր հայրենիքի քաղաքակրթական արժանիքի գնահատումն ստացաք»:

— Կոմիտասը ընտրվում է Միջազգային երաժշտական ընկերութեան անդամ: Նրա կարգացած դասախոսութիւնների նյութերը հրապարակվում են գերմանական պարբերականներում:

Նման դասախոսութիւններով Կոմիտասը հանդես է գալիս Ալեքսանդրիայում, Բեռլինում, Փարիզում, Լոզանում, Ժնևում, Վենետիկում, Պոլսում, Բաքվում, Թիֆլիսում, Իզմիրում և այլուր:

Համբուրգի ավարտական հանդեսում պրոֆ. Ռիխարդ Շմիդտը Կոմիտասին ներկայացնում է հետևյալ խոսքերով.

«Կոմիտասն արդեն մի վարպետ է: Ես հպարտ եմ նրանով: Զգում եմ, որ ապրում եմ և ապրելու եմ Կոմիտասի մեջ»:

1900, հունիսի 21 — Գերմանական «Բեռլիներ տափերլատ» օրաթերթի № 309-ում լույս տեսավ կաթողիկոս Խրիմյան Հայրիկի կոնդակը ուղղված Կոմիտասի ուսուցիչ Շմիդտին, որի մեջ ասված է. «Սրտի անհուն բերկրութեամբ և խորին շնորհակալութեամբ հաղորդում ենք Ձեզ, գերապատիվ պրոֆեսոր, թե Ձեր խնամոտ ջանքերի պտուղը տեսնում ենք հանձին մեր հարազատ և սիրեցյալ որդու՝ Կոմիտաս վրդ. Գևորգյանի...»

Նա ճոխացուց Ձեր իրեն շնորհած բոլոր ծանոթութիւններով և գիտելիքներով, հազիվ վերադարձած՝ ի հայտ բերեց գերազանց կարողութիւն երաժշտական արվեստում, և մեզ բոլորիս գոհ թողեց ամեն տեսակետից...»:

Բեռլինից վերադառնալուց հետո, ձեմարանում, ուսուցչական իր աշխատանքներին զուգընթաց, Կոմիտասը մեծ ջանասիրութեամբ շարունակում է հավաքել ու մշակել հայ ժողովրդական, հայ գեղջուկ երգերը:

1901 — Կոմիտասը մասնակցում է Բեռլինում կայացած երաժշտական կոնգրեսին: Հայ եկեղեցական երաժշտութեան մասին նրա տված զեկուցումը մեծ հետաքրքրութիւն է առաջացնում ունկնդիրների շրջանում: Կոնգրեսից հետո նա անցնում է Փարիզ, ուր անձնական ջերմ ծանոթութիւն է ստեղծում անվանի մտավորական Արշակ Զոպանյանի հետ, որն իր խմբագրած «Անահիտ»-ում մեծ գովեստով է խոսում Կոմիտասի մասին:

1902 — Թիֆլիսում Կոմիտասի հետ ծանոթութիւն է հաստատում Մարգարիտ Բաբայանը, որն այդ օրվանից դառնում է Կոմիտասի ամենամտերիմ բարեկամը, նրա մեծ տաղանդի երկրպագուն:

1904, դեկտեմբերի 21 — Թիֆլիսում լույս տեսնող «Նովո-

յի օրոգրենիս» ռուսերեն օրաթերթում լույս տեսած «Կովկասյան երաժշտությունը» հոդվածում երաժշտագետ Վ. Ղորղանյանը մեծ գովասանքով է խոսում Կոմիտասի մեծ միսիայի մասին. «Վերջապես, շատ տարիներ անցնելուց հետո,— գրում է նա,— գտնվեց մի մարդ, որ զինված մասնագիտական կարողություններով, նվիրվեց կովկասյան երգերի ուսումնասիրությանը, արհամարհելով ամեն մի դժվարություն: Կոմիտասն հանդիսանում է հայկական երաժշտության առաջին ուսումնասիրողը... Նրան քաջալերողը ծառայած պիտի լիներ ոչ թե նրան, այլ գեղարվեստին և ամբողջ մարդկության»:

1906—1907 թթ. ժամանակաշրջանում «Բեռլինի Վենետիկի, Զվիցերիայի և Փարիզի մեջ Կոմիտասի տված համերգներուն և դասախոսություններուն առաջացուցած հետաքրքրության ու հիացումի ալիքները շարժվեցան մինչև Լոնդոն...»

1905—1914—Այս թվականների միջև ընկած ժամանակամիջոցում Կոմիտասը գրում է նաև քնարական բանաստեղծություններ: Մեծ արվեստագետի հոգուց թխած այդ քնքույշ ու ինքնատիպ սիրո երգերը Կոմիտասի բազմակողմանի տաղանդի դրսևորման վառ արտահայտություններից մեկն է:

Բանաստեղծությունները «Քնարերգություններ» խորագրով հրատարակել է Կոմիտասի կենսագիր Թ. Ազատյանը Կ. Պոլսում, 1939 թ.:

1905, ապրիլ—Թիֆլիսի Արտիստական ընկերության դահլիճում ապրիլի 1, 3 և 6-ին տեղի է ունենում Կոմիտասի անդրանիկ համերգը՝ կազմված ժողովրդական և եկեղեցական երգերից: Այդ օրերին նա երկու զեկուցում է կարդում երաժշտանոցի դահլիճում:

1906—Կոմիտասը դարձյալ այցելում է Փարիզ:

— Դեկտեմբերի 1—Փարիզում Կոմիտասը, ֆրանսիական երգչախմբով տալիս է մի հիասքանչ համերգ, խոր հիացմունք ստեղծելով հայ երաժշտության և իր շուրջը: Համեր-

գին մասնակցում էին նաև Բաբայան քույրերը, Արմենակ Շահ-Մուրադյանը և ուրիշներ: Ֆրանսիական երաժշտական մամուլը հարգանքի ջերմ խոսքեր է ասում Կոմիտասի այդ օրվա ելույթի մասին: Նա իր համերգները կրկնում է Շվեյցարիայում:

1906—1907—Կոմիտասը շուրջ մի տարի մնում է Փարիզում, մոտիկից ծանոթանում Դեբյուսիի և ֆրանսիական մյուս նշանավոր երաժիշտների արվեստին: Նա դարձյալ մի քանի դասախոսություններ է կարդում և հայ երաժշտության վերաբերյալ հոդվածներ տպագրում «Mercure musical» հանդեսում:

1907, հունվարի 13—«Արվեստի դպրոցի» վարչության հրավերով «Rue de Sorbonne»-ի սրահում, Հայ Գաղութի «Մասիս» ակումբում Կոմիտասը դասախոսություններ է կարդում, կատարում իր ձայնագրած ժողովրդական երգերից շատերը:

— Փարիզում տպագրվում է Կոմիտասի 12 երգից բաղկացած ստեղծագործությունների առաջին ժողովածուն, որի մեջ զետեղված էին նրա մեներգներն ու խմբական գործերը:

— Փարիզից Կոմիտասը մեկնում է Շվեյցարիա: Ցյուրիխում, Լոզանում, Ժնևում, Բեռնում և մյուս քաղաքներում նա հանդես է գալիս դասախոսություններով ու համերգներով: Այդ առթիվ շվեյցարական թերթերը գրում են.

«Հայաստանը լեռների և հովիտների մի երկիր է մերի նման. Շվեյցարիան քույր մի երկիր է իր բնությամբ, սակայն հայերը ի՞նչ հրաշալիքներ են հանել իրենց բնության ներշնչումներից...»:

— Շվեյցարիայից Կոմիտասը անցնում է Իտալիա: Վենետիկում նա հանդես է գալիս համերգով ու դասախոսությամբ: Միսիթարյանների հին ձեռագրերում որոնումներ է կատարում իր հետագա աշխատանքների համար:

1908, ապրիլ—Կոմիտասը երկու համերգ է տալիս Բաբվում և մեկ դասախոսություն կարդում արժանանալով հասարակության և տեղական մամուլի բարձր գնահատությանը:

1908—1909—Կոմիտասը նամակագրութիւնն է ունենում հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի հետ, «Անուշը» օպերայի վերածելու առնչութեամբ: Այդ նամակները հայ ժողովրդի երկու մեծ զավակների փոխադարձ հարգանքի ու մտերմութեան մի վառ ապացույցն են:

«...Վաղուց է սկսել եմ և բավական բան գրել քո «Անուշից», բայց դեռ պակասավոր բաներ շատ կան, որպեսզի մի ամբողջութիւն դառնա: Այս գիրս առնելուն պես գրիչդ կանչես և ինձ մի դրական բան կգրես: Այս ամառվան արձակուրդին պետք է զբաղվեմ առավելապես «Անուշով»: Գրիր, թե ե՞րբ կարող ես մի քանի օրով ինձ մոտ գալ և այստեղ միասին վերջացնենք և ես հանգիստ շարունակեմ, ամեն անգամ երբ տրամագրութիւնս տեղն է, ձեռքերս թուլանում են, որովհետև երգի հարմարեցրած չեն, դեռ բաներ ու պակասներ էլ կան:

- Սպասում եմ պատասխանիդ:

Կգաս և առանց այլևայլութեան կիջնես ինձ մոտ և միասին կաշխատենք»:

(Հատված նամակից)

1904, 24 մայիսի, Ս. էջմիածին:—«Սովետ Հայաստան», 1940, 22 հոկտեմբերի:

1909, սեպտեմբեր 5—Այլևս չտանելով խավարամիտ վանականների հալածանքը, Կոմիտասը Մատթեոս Բ կաթողիկոսին է ներկայացնում իր հայտնի դիմումը էջմիածնի միաբանութիւնից իրեն ազատելու խնդրանքով:

Կաթողիկոսը մերժում է դիմումը:

1909, նոյեմբերի 5—Մոսկվայի համալսարանի ուսանող Ալեքսանդր Մյասնիկյանը ուսանողական միութեան անունից դիմում է Կոմիտասին և խնդրում գալ Մոսկվա ուսանողներից երգեցիկ խումբ կազմակերպելու, համերգներ տալու ուսանողութեան կարիքների համար:

Կոմիտասը սիրալիր պատասխանում է նրան. «Մեծ սիրով

կուզեի մի այսպիսի կարևոր գործ ուսանողութեանդ միջոցով և հօգուտ նորա կատարել, բայց գոնե այս տարի հանձն առնել չեմ կարող, զի Գ. Ճեմարանում դասերով կապված եմ և Մայր տաճարի մեջն էլ խմբավարութեան պաշտոնով: ոչ մի օգնական չունիմ. ուստի ցավելով և ստիպված մերժելու եմ: Ձեր ուզած և իմ ցանկացած համերգը պատվովոր գլուխ գնալու և պատրաստելու համար. իսկ այդքան երկար ժամանակ ինձ դժվար թե թողնեն բացակայեմ: Բայց և այնպես, փորձեցեք՝ դիմեցեք պաշտոնապես վեհափառին, գուցե թույլատրում է, այն ժամանակ կգամ. ես պատրաստ եմ ծառայելու...

Եթե այդ չի հաջողվի, կթողնենք եկող տարվան, ես այլևս ուսուցչութիւնը թողնելու եմ, ազատ եմ և կարող եմ:

Հարգանքներով՝

Կոմիտաս վարդապետ»:

1910, հունվարի 12—Կոմիտասը հուսահատված ու զայրացած երկրորդ դիմում-բողոքն է գրում կաթողիկոսին.

«...Համարձակութիւն և վստահութիւն եմ ստանում հայտնելու, որ արդեն 11-րդ տարին է, ինչ ես ուսումս կատարելագործել, սկսել եմ Մայր աթոռի երաժշտութեան պայծառութեան համար ծառայել, բայց իբր մի անպետք կոճղ ընկած մնացել եմ այստեղ, բախտի հովերին հանձնված և քանի ավելի ժամանակս անցնում է, մարում է սրտիս բոցը, հոգուս եռանդը և մերձ է հոռետեսութեանն ու հուսահատութիւնը, որ իբր երկգլխանի ճիվաղ ինձ պաշարե, որից հետո մնում է ինձ միայն մի ելք, որոնք այլ տեղ, այլ հանգամանքներ, որպեսզի անպետք ընկած չմնամ այստեղ»:

— Գաբուն — Հայրենիք վերադառնալու պատրվակով, Կոմիտասը հեռանում է էջմիածնից և հաստատվում Կ. Պոլսում: Նա մտադրվում է այստեղ երաժշտանոց (կոնսերվատորիա) հիմնադրել:

տորիա) բացել: Ստեղծում է 300 հոգուց բաղկացած «Գու-
սան» երգչախումբը:

— Դեկտեմբերի վերջերին Կոմիտասը համերգների է
մեկնում Իզմիր, ուր նրան ցնծությամբ են ընդունում: Խան-
դադատագին հրավերներ է ստանում ներքին գավառները
գնալու համար:

1911, փետրվար-մարտ—Համերգներ է տալիս Կ. Պոլսի
զանազան դահլիճներում և ունենում է շոնդալից հաջողու-
թյուն:

— Ապրիլ—Ընդառաջելով մեծաթիվ հրավերներին Կո-
միտասը ճանապարհվում է Եգիպտոս: Մի քանի դատախո-
սություն է կարդում Ալեքսանդրիայում և Գահիրեում:

— Հունիսի 16—Ալեքսանդրիայի Ալհամայրա թատրոնի
մեծ սրահում, հոծ բազմության առաջ, Կոմիտասը համերգ
է տալիս իր 190 հոգուց բաղկացած երգչախմբով:

1912, մարտ-ապրիլ—Կոմիտասը համերգներ է տալիս Պոլ-
սում, որոնք անցնում են մեծ հաջողությամբ: Մի քանիսի
հասույթը Կոմիտասը հատկացնում է բարեգործական հիմ-
նարկներին: Կրկնած համերգներից մեկի հասույթը, որ
շուրջ 1000 ոսկի էր անում, Կոմիտասը նվիրեց ազգային
հիվանդանոցին:

1913—«Ամռանը ես Ծաղկաձորում էի: Լսեցի, որ Կոմի-
տասը Պոլսից վերադարձել է էջմիածին... Բայց երբ ներկա-
յացել է կաթողիկոսին, վերջինս հարցրել էր նրան, թե նա
երբ պիտի վերադառնա Պոլիս: Կոմիտասը այդ հարցի վրա
սաստիկ զայրացել է և քիչ հետո ճանապարհ ընկել...»:

(Մ. Աբեղյանի հուշերից)

— Նույն տարում կարճ ժամանակով Կոմիտասը մեկնում
է Բեռլին՝ երգերի հրատարակության և երաժշտական նոր
ուսումնասիրությունների համար:

1914, հունիս 1—15 — Կոմիտասը մասնակցում է Փա-
րիզում գումարված Համաշխարհային երաժշտական ընկե-

րության կոնգրեսին, որի հիմնադիր անդամներից մեկն էր:
Այդ կոնգրեսում նա կարդում է երկու դասախոսություն.
«Հին և նոր նոտագրությունը հայկական հոգևոր երաժշտու-
թյան մեջ» և «Հայկական ժողովրդական երաժշտությունը»:
Կոնգրեսի անդամների խնդրանքով կարդում է երրորդ չնա-
խատեսված դասախոսությունը «Հայ երաժշտության տա-
ղաչափության և շեշտադրության մասին»:

Մեծ էր հետաքրքրությունը հայ երաժշտության նկատ-
մամբ. ընդհանուրի հիացմունքին ու բարձր գնահատակա-
նին արժանացած, Կոմիտասը այդ համերգներով ու դասա-
խոսություններով մանավանդ «Հայն ունի ինքնուրույն երա-
ժշտություն» հոդվածով, անհերքելիորեն ապացուցեց աշ-
խարհին հայ ազգային ժողովրդական երգի գոյությունն ու
նրա ինքնուրույնությունը:

Այդ Կոմիտասի վերջին ակնառու ծառայությունն էր հա-
րազատ ժողովրդի երաժշտությունը Եվրոպային ճանաչելի
դարձնելու գործում:

1915—Մեծ եղեռն: Հայկական ջարդ...

— Ապրիլի 11-ին հայ նշանավոր մտավորականների՝
Սիամանթոյի, Դ. Վարուժանի և մյուսների հետ միասին
Կոմիտասը փանջամահության գնացող բազմությանը խառ-
նըված Պոլսից քշվում է Անատոլիայի խորքերը: Նա ակա-
նատես եղավ իր ժողովրդի ողբերգությանը: Տեսավ մորթ-
վող մայրեր ու երեխաներ... Արյան գետեր հոսեց նրա հո-
գու միջով ու ցնցեց տալին ի վեր: Վերջին պահին, միջնոր-
դությամբ, փրկվում է նրա կյանքը... Բայց արդեն մեռած:
Խեղաքարված Կոմիտասը շնչեց ևս 20 տարի որպես ապրող
նահատակ:

1919—Պոլսի հոգեբուժարանից Կոմիտասին տեղափոխում
են Փարիզ, այն քաղաքը, որն ընդամենը մի քանի տարի
առաջ խանդավառությամբ ծափահարում էր հայ երգերի կա-
խարդ կատարողին ու դաշնակողին:

1919—1921 — Կոմիտասը անց է կացնում Փարիզի Վիլ-
էվրար արվարձանի հիվանդանոցում:

1921—Մինչև իր մահը մնում է Վիլ-Ժուլի հիվանդանոցում:

1930—1931 — մեծ հանդիսավորությամբ ու շուքով մայր հայրենիքում ու Սփյուռքում տոնվում է Կոմիտասի ծննդյան 60-ամյակը...

Նա հավաքեց ու գրի առավ ավելի քան 3000 ժողովրդական երգ, գրեց բազմաթիվ ծանրակշիռ ուսումնասիրություններ ժողովրդական ու եկեղեցական երաժշտության մասին:

Նա ստեղծեց շուրջ 80 խմբերգեր, քառասունից ավելի մեներգեր դաշնամուրի ընկերակցությամբ, դաշնամուրային 6 պարեր, «Պատարագը» և հոգևոր այլ երգեր:


Նա ստեղծեց «Անուշ» օպերայի երգային հատվածները (առանց նվագակցության), «Քաղաքավարության վնասներ» երաժշտական պատկերների կլավիրը, ուսումնական բնույթի վոկալ, դաշնամուրային և նվագախմբային, մեծ մասամբ մինիատյուր գործեր:

Նա աշխատանք էր տանում «Վարդան», «Սասնա ծռեր» օպերաների ստեղծման համար, որոնք, ավաղ, շատ մտահղացումների հետ մնացին անկատար:

Կոմիտասին զբաղեցրել է նաև քուրդ ժողովրդի հարուստ ժողովրդական ստեղծագործությունը: Դեռևս 1899 թ. Բեռլինի Երաժշտանոցը վերջացնելու համար նա գրում է քուրդ երաժշտության մասին իր ուսումնասիրությունը, որը մեծ ուշադրության է արժանանում:

Քացի այդ, Կոմիտասը գրի է առել 13 քրդական երգեր, որոնք քրդական երգարվեստի անգերազանցելի նմուշներ են. «Ղանդիլի Սիափուշ», «Լեյլի Մեջնուն», «Մամազին», «Քուլլըկ Գեարո», «Դարվիշի Սվգի» և այլ սիրավեպեր:

1935 հոկտեմբերի 21—Երկուշաբթի առավոտյան ժամը 6-ին, հայրենիքից հեռու, վշտից ճերմակած ու ծերացած, Փարիզի հոգեբուժարանում վախճանվեց Մեծ Կոմիտասը: Հայ ազգային երաժշտության հիմնադիրը, նրա խոշորագույն վարպետը: Նրա մահը վերածվեց համազգային սուգի:



«Ինքնակենսագրության» առաջին էջը

— Հոկտեմբերի 27—կատարվում է Թաղման հանդեսը:

Թաղման արարողությանը մասնակցում էր ընտրյալ մի երգչախումբ, որի անդամների մեծամասնությունը Կոմիտասի պոլսական աշակերտներն էին: Այնտեղ էր նաև Արմենակ Շահ-Մուրադյանը՝ հարգանքի վերջին տուրքը տալու իր անմահ վարպետին, անգիտակ՝ թե նրա ետևից շատ շանցած ինքն էլ էր գնալու միևնույն եղեռնական ճանապարհով:

Ժամը 130-ին ավարտվում են դամբանականները և նրա դագաղը իջեցվում է եկեղեցու նկուղը՝ փոքր մի մատուռ՝ հարմար առիթով Հայաստան փոխադրելու նպատակով:

1936 մայիս—Հայտնի հոգեբույժ Հ. Յազմաչյանի գլխավորությամբ Ֆրանսիայից ներգաղթող հայերի հետ Կոմիտասի աճյունը զմուսված, փոխադրվում է Երևան, ուր մեծ հանդիսավորությամբ հայ ժողովուրդը իր երախտավոր զա-

վակին ուղեկցում է վերջին ճանապարհը դեպի պանթեոն:
Տարաբախտ Կոմիտասի աճյոսնը հավերժական հանգիստ է
գտնում հայրենի հողում: Իսկ նրա նվիրական անունը, նրա
պայծառ հիշատակը հավերժ ապրում է սերունդների հետ,
կորստից փրկած մեղեդիներում՝ կոմիտասյան հոգեթով եր-
գերում:

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ, ՀԱՅՐԵՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆ

...Մեր փրկությունը կոելու և կոփելու ենք Փերպուրկի
(Պետերբուրգի) պարիսպներու դռներուն առաջ. ա՛յս էր
աչնդել ժամանակին Լոուիս Մելիքով Գևորգ Դ. կաթողիկոսին
զգուշացնելով:

Արդեն քաջ գիտես, որ Անգլիո, Ֆրանսիո ու Ռուսիո
միության գլխավոր նպատակն էլ այս էր: Ուրեմն չի՛ք փր-
կություն արտաքո Ռուսիո: Պետք է նախ բոլոր հայերը
խմբվեն մեկ տերության, մեկ օրենքի տակ, աճեն ու զար-
գանան բարոյապես և նյութապես և ապա ժամանակն ինքն
է, որ պիտի բերե մեզ մեծ ազատությունը. շտապելով,
առաջինը չառած երկրորդ քայլի դիմելով բոլորովին պիտի
կորչենք. տաճիկեն ո՛չ մի հույս մի ունենար, մի սպասեք.
նորա ուղեղը քարե ժայռից է, զարգացման անընդունակ,
լոկ փշրվելու համար պիտանի և ոտքի տակը սալահատու-
թյան համար:

Զպետք է բաժանվենք. չպետք է խաբվենք Եվրոպայի
զանազան խոստումնալից խաբկանքներեն. միանալու ենք և
գործնական ճամփան բռնելու՝ ըստ իս, առաջին քայլն է
բոլոր-բոլոր հայությունն ամփոփել ռուսի իշխանության
տակ. երկրորդ քայլն է տնտեսապես ու բարոյապես, զուտ
ազգային, առանց օտարեն ու մեզ անմարս զաղափարներով
առաջնորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդեն ինքը ռուս

հեղափոխությունն է, որ պիտի անե, ոչ թե մենք. իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն. սակայն պատրաստվելով, լեհերու պես լուր ազգային շավիղը բռնելով. եվրոպական մարդկային գաղափարները որքան որ լրնտիր են ու փափագելի, բայց մեզ անպետք են. պաղ երկրի բույսերը մեր ջերմ արևին տակ կկիզվեն:

Ես վախ չունիմ, թե ուր կառավարության մեջ կհալենք, որքան ալ որ հալենք, այնուամենայնիվ մեր ինքնագիտակցությունը զարթնած է և եթե խելոք շարժվենք կվաստակենք. ես այս կարծիքն ունիմ:

Ա. Չոպանյանին գրած նամակից:

Կ. Պոլիս, 1912, 25 դեկտեմբերի: «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 262—263:

Հայ ժողովրդի զավակներ՝, դուք կարդացեք Մովսես Խորենացի, Նղիշե, Նարեկացի, Խաչատուր Աբովյան, Բաֆֆի, Ալիշան, Պեշկևիթաշյան և տեսեք, թե ով ենք մենք:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», կազմեց Գ. Գասպարյան: Եր., Հայպետհրատ, 1960, էջ 232:

Մեր մեջ կենսունակության ջիղք խաթարված է, որովհետև մայր երկրես հեռացած, գաղթավայրերու մեջ է, որ կուզենք զայն բխեցնել: Գաղթականությունը չէ, որ սնունդ պիտի տա գրականության, գեղարվեստին, այլ բուն իսկ հայրենի հողը, ուրկե հեռացած է ան և որուն վերադառնալուն կոչ եղավ այստեղ:

«Սովետական արվեստ», 1965, № 4, էջ 34:

Այժմ հանգամանքները լավանում են, ժողովուրդը սթափվել է և լուրջ կերպով ուսման ետևիցն է դնում, որ միակ փրկությունն է մեր և ապագա կյանքի պատվանդանը:

Նամակից

«Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 265:

...Այսպիսի հանգամանքներում, երբ ավելի զորեղ զենք չունենք՝ քան մեր հին ու նոր եկեղեցուն ու աշխարհիկ և գիտական ու գեղարվեստական կարողությունները ցուցադրել, որ տեսնեն, թե իբր ողորմություն չէ՝ որ խնդրում ենք, այլ իբր մարդկային զարգացման զորավիգն ազգ ենք հրապարակ ելնում: Երանի թե սկզբեն այս զենքն առնեինք. առանք մի զենք որ ավելի զորեղները փշրեցին. բայց մեր ունեցածը՝ անընկճելի և անխորտակելի է՝ հայու սիրտն ու հոգին է իբր զենք շաշում: Լավ է ուշ, քան երբեք: Մանավանդ, երբ հրապարակ է ելնում հայ հանճարը՝ հայ անձերի, կաղմակերպիչների, երգողների, նվագողների և խոսողների ձեռքով, արդեն զինաթափ են լինում ամեն նախապաշարումներ միանգամայն:

Ա. Չոպանյանին հղած նամակից

1913, 7 օգոստոսի, Կ. էջմիածին: Նույն տեղում:

Ցարդ գավառը մեր աչքին առջև լծորդված է խավարի հետ: Մենք մեծ մասամբ գավառը կը ճանչնանք իր սգի-տությունով և հետամնացությամբ: Բայց գավառը իմ աչքիս առջև կը պատկերանա իբրև սրբավայրը հայ գեղարվեստի:

նշխարներու, հոն կտեսնեմ հայ երգը՝ հայ գեղջուկին շրթներու վրա, հայ գութանը, հայ գեղջուկը՝ իր արորին ու մաճկալին հետ, ու քարերն անգամ նվիրականություն մը կը հիշեցնեն: Այդ քարի բեկորներն են մեր հայրենիքը, հոն են շերտերը մեր գեղարվեստին և ոչ թե մայրաքաղաքներուն մեջ, ուրկե մենք գավառը կղիտենք իբրև խավարի վայր:



...Գավառի շունչը տվավ մեզի: Շնչենք այդ շունչը, մանավանդ դուք, երիտասարդներ, շնչեցեք զայն երիտասարդական շունչով մը, որովհետև ան գավառեն կուգա, մեր հայրենի բնավայրեն, որուն արևը քաղցր է, ջուրը անուշահամ, ևրկինքը վճիտ և օդը կենսատու ու պայծառ և որուն վրա կը սավառնի գեղեցկութիւնը: Շնչեցեք այդ գեղեցկութիւնները:

«Սովետական արվեստ», 1965, № 4, էջ 35, 45:

ՍԻՐԵ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝

(Մի մանկան ալբոմից)

Սիրուն մանկիկ, կայտառ մանկիկ, օր մը դուն ալ պիտի մեծնաս ու մարդ դառնաս: Քեզի պզտիկ խրատիկ մի տամ:

Միտքդ մարզե ազնիվ գիտութիւններով և մաքուր գեղարվեստով: Իմաստունի ծովածավալ մտքեն որսա՛ր գիտութիւն և գեղարվեստի սրտեն բարի բարի զգացումներ: Գըրքերն ու ձայները մեռած հոգիներուն մտքի ու սրտի տապաններ են:

Հետևե բնության դպրոցին. միտքդ բաց ու կարդա անոր ծով միտքը, որի մի կաթիլն է քո մեջ Արարչի շնորհած ձիւրքը. սիրտդ բաց և թող արծազանքե հոն անոր խորհրդա-

վոր ու գաղտնի ձայները, զի քո սիրտն ալ անոր անեղր ձորի մեկ ձորեկն է, որ շնորհել է քեզ երկինքը՝ հոն պաշարելու ազնիվ ազնիվ զգացումներ:

Կարդա՛ բնության գիրքը, որ կարելի չէ ո՛չ մեկ բանով գրել, ո՛չ մեկ ձայնով արձագանքել, ո՛չ մեկ գութնով նկարել, և ո՛չ մեկ գործիքով դրոշմել...: Բնության երևույթներն անհունապես հեղհեղուկ են. այնտեղ կյա՛նք կա, որ չէ կարելի անկենդան տառերով ու ձայներով, գրիչներով ու բրդներով, վրձիններով ու շափերով դրոշմել-պարփակել. անմասն է արշալույսին. միշտ թարմ, միշտ նոր, միշտ կենդանի, միշտ կենսատու, միշտ մայր ծնող մտքի ու սրտի և քեզ պես մանուկներու նման միշտ մանուկ ու պարզով:

Սիրուն մանկիկ, պայծառ մանկիկ, սիրե բնութիւնը...:

Կոմիտաս վարդապետ

1911/X, Աղեքսանդրիա

Անեմյան Լ. Եգիպտահայ տարեցույց: 1926, Բ տարի, Աղեքսանդրիա, 1925, էջ 163:

ԻՆՉ Է ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ



Գյոթենն երաժշտութիւնը համարում է մարդու համադեղակի, աստվածային շնորհ:

«Արարատ», 1897, № 2, էջ 65:



Մահվան արժանի է այն ժողովուրդը, որ զուրկ է գեղարվեստե, որովհետև ժողովուրդ մը՝ որ գեղարվեստ չունի, կնշանակե թե զգալու կարողութիւնը չունի: Եվ ի՞նչ է ժողովուրդ մը՝ որ չի զգար:

...Ու գեղարվեստը արդեն ազգի մը արևն ու կենսունակության ջիղը չէ՝ միթե:

«Սովետական արվեստ», 1965, № 4, էջ 34:



Երաժշտությունը մի տեսակ շարժողություն է, ինչպես լույսը, ինչպես ջերմությունը, էլեկտրականությունը և այլն:

Եվ սա շատ պարզ է, որովհետև երաժշտությունը կաղմըված է ձայներից, որոնք ուրիշ բան չեն, եթե ոչ օդում առաջ եկած շարժումներ:

Հետևաբար մի երգի, մի եղանակի մեջ պետք է տեսնել նախ շարժողություն: Եվ այդ շարժողությունը համապատասխանում է ներքին աշխարհի շարժողության, այսինքն զգացումների և հույզերի: Այդ մարդու ներքին աշխարհի շարժումները արդյունք են արտաքին աշխարհի շարժումների: Այսպես, միջավայրի զանազանությունը ծնուդ է տալիս զգացումների զանազանությանը: Եվ երաժշտությունը, արտացոլում լինելով զգացումների, մեզ ներկայանում է տխուր, ուրախ, վեհ, — նայելով այն միջավայրին, ուր ապրում, զգում և արտադրում է մի ժողովուրդ:

Երաժշտության արտահայտության եղանակը, ոգին կախումն ունի բնությունից: Իսկ ինչ վերաբերում է նրա բովանդակությանը, դա կախված է ժողովրդի կյանքի պայմաններից:

Ժողովրդական երգերը բաժանվում են հետևյալ տեսակների.

1. Մանկական երգեր, որոնք ամենապարզ կազմն ունեն:

2. Պարերգեր, որոնք կոչվում են յայլի և մի քիչ ավելի զարգացած են, բան առաջինները:

3. Դյուցազներգեր, որոնք նվիրված են լինում որևէ հերոսի գովքին:

4. Մահերգեր, նվիրված՝ դիպվածների և պատահարների զոհ զնացողների հիշատակին: Այս բաժնի մեջ մտնում են և ողբերգները, մեռելները սգալու եղանակները:

5. Հարսանեկան երգեր, որոնք երգվում են հարսանեկան զանազան արարողությունների ժամանակ, պսակից հետո:

6. Բնության երգեր, որոնք ամենագոտնեղներն ու հետաքրքիրներն են: Օրինակ գութանի, վար ու ցանքի, սայլի, չութի, կալի, հունձքի, բաղհանի երգերը իրենց նյութն ըստանում են շինականի աշխատանքի այլևայլ հանգամանքներից:

Կոմիտաս: Հոգևածներ և ուսումնասիրություններ: Եր., Պետհամալսարան, 1941, էջ 12:



Մեկ հասկացված անկեղծ ձայնը հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ որ ժամանակներու գործ է. իսկ ձայնը վայրկյանին մեջ կթափանցե մարդուն կուրծքն ներս և այնտեղ կհիմնե զգացման ու մտքի վառարան:

Նկարող երաժշտության նպատակն էր գծագրել բնությունը, արտաքին աշխարհը ձայներով:

Իսկապես ներքին աշխարհի զգացումներն արտահայտեցն էլ է մի տեսակ ձայնանկար, բայց նկարող կամ ծրագրող երաժշտություն ասելով հասկանում են միայն այն երաժշտությունը, ուր երաժիշտը ձայներով նկարում է տե-

սանելի կամ շոշափելի առարկաների, բնության երևույթների և այն ամեն բանի պատկերները, որոնք արտաքին աշխարհին են պատկանում: Օրինակ ամպի գոռոց, որոտում, կարկաչ, քամու սուլոց, թռչներգ, թնդանոթի թնդյուն, սրի շաշյուն, շանթի ճայթուն, լույսի փայլկտալը, աղբյուրի գլգլոց, ամբոխի աղմուկ և այլն և այլն: Բոլորն էլ անսպառ նյութ են այս տեսակի երաժշտության համար: Երաժշտության նկարող ոճը շատ վաղ ժամանակներիցն է հայտնի:

«Տարազ», 1904, № 19, էջ 174:



Ի սեր մեր եկեղեցու և Հայ Գեղջուկի երաժշտության պայծառության ո՛չ մի ջանք մի՛ խնայեք, ձեր ձեռքեն եկածն արեք: Դուք արդեն քաջ գիտեք, թե ինչպիսի մեծ փրկություն է կախված մեր եղանակներն անաղարտ պահելուց և ժողովրդի ու իր եկեղեցու ազնիվ ու մաքուր սիրտը ճանաչելուց:

Ա. Չոպանյանին գրած նամակից
1904, 20 հունվարի, Պատմա-բանասիրական հանդես: 1958, № 1, էջ 248:

ՀԱՅՆ ՈՒՆԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է ազգային երաժշտությունը, ի՞նչ է նյութ տալիս ազգային ժողովրդական երգերին: Արդյո՞ք նրա հպարտ լեռները, խոր ձորերը, դաշտերը, բազմազան կլիման, պատմական հազար ու մի դեպքերն ու անցքերը, ժողովրդի ներքին և արտաքին կյանքը — այո՛, այս բոլորը, բոլորը նյութ են կազմում ազգային երաժշտության, մի խոսքով՝ այն ամենը, ինչ ազդում է այդ ազգի զգայարանների և մտքի վրա:

Կոմիտաս: Հոգվածներ և ուսումնասիրություններ: էջ 9:



Հայ երաժշտությունը ոչ միայն մեղկ ու տխուր չէ, այլ համակ ուժ է և կենդանություն, ու իր մեջ կանուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց մեջ — կենդանի, — որքան կենդանի է այդ ցեղը, ուժեղ, — որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը:

Նույն տեղում, էջ 195:



...Հայ եղանակները, ինչպես և նոցա ոգին պահանջում են ներդաշնակել որքան կարելի է պարզ, որը և նույնքան դժվար է: Հետո դեռ մենք, հայերս, պետք է մեզ համար ոճ ստեղծենք ու ապա թե համարձակ առաջ գնանք: Ես դեռ ցարդ ստացել եմ ուրիշներից, և այժմ, նոր եմ սկսում հայ եղանակներին համաձայն ոճով դաշնակել: Ժամանակ է լինում, որ ես ընկղմված եմ կատարելապես միայն հայ երաժշտության մեջ և ահա այն ժամանակ ես գրում եմ, ես ստեղծում եմ այնպիսի բան, ինչպիսին հարմար է մեր երաժշտության ոգուն, բայց լինում է և ժամանակ, որ առանց իմ կամքի ընկնում եմ մի այնպիսի երևակայության շավղի վրա, որ կամ հայկական չէ, կամ նորա կողքից է անցնում: Բայց և այնպես ես պիտի հասնեմ նպատակիս, նույնիսկ եթե ամբողջ կյանքս վրա դնեմ:

Հատված նամակից: Էջմիածին, 1909:
Ժամանակակիցները Կոմիտասի մասին, էջ 122:



Գեղջուկը բնության հարադատ զավակն է. ուստի ճաշակել է բնությունը թովանդակ հոգով ու սրտով: Իր երգերուն մեջ բնությունը կխոսի, որովհետև բնությունն է նախ իր մեջ խոսած: Իր սրտին մեջ բնության ծովը կը հուզվի, վասն զի ինքն իսկ բնության ակիքներուն վրա կը դեգերի: Իր երգերն իր կյանքն են, զի իր ամբողջ կյանքը — իր երգերուն մեջն է ներշնչված: Վերջապես, գեղջուկ երգը տեսակ-տեսակ ասուն հայելիներ են, որոնք զատ-զատ, իրենց ծնունդ առած վայրերուն դիրքը, կլիման, բնությունն ու կյանքը կանդրադարձնեն:

Տե՛ս Ս. Գասպարյան, «Կոմիտաս» գրքում: Եր., Հայպետհրատ, 1961, էջ 100:



Խորհրդավոր ու պաշտելի գաղտնիք. շինականը բնության գրկում, բնությունը շինականի սրտում վերստին ու միաժամանակ ծնունդ են առնում:

Շինականն այն կախարդ վարպետն է, որ կարողում է հարադատորեն բնությունը, ստեղծում բաղմաբեղուն մտքեր, նոցա փչում իր հզոր ու պարզ շունչը, դրոշմում է իր բնավորության էականով՝ ներքին և արտաքին լրիվ կյանքով և կնքում է բառերով ու եղանակով իր հարադատ զավակը՝ «Գութաներգը»:

Յուրաքանչյուր երգ շինական սրտի հարադատ արձագանքն է և հոգու վճիռ հայելին: Յուրաքանչյուր երգ պատկերացնում է կյանքի տեսարանի մի լայն նկար՝ շրջանակի մեջն առած:

«Անահիտ», 1935, թիվ 5, էջ 27:



Երգաստեղծության շնորհը գեղջուկի համար մի բնատուր պարգև է: Ամենքն ալ, լավ կամ վատ, խաղ կապել և երգել գիտեն: Նա սովորում է երգաստեղծության արվեստը հենց բնության գրկում, որ նորա անդամաձան դարձնում է:

Քաղաքացի հայերը ժողովրդական երգերին տալիս են «գյուղական», «գեղջկական», «շինական» և «ուսմական» անունները և շատ իրավացի. որովհետև երգ ստեղծողը, խաղ կապողը գյուղացին է. երգաստեղծության մեջ բաժին չունի յուրաքանչյուր գեջուկ:

«Անահիտ», Փարիզ, 1936, № 4, էջ 3:



Գյուղում ամենքն էլ, լավ կամ վատ, երգել գիտեն, որովհետև մասնակից են երգաստեղծության կամ երգասացության: Բայց և ոչ մեկը չգիտե, թե ո՞վ է կապել խաղը, որովհետև բոլորը միասին են հյուսում: Ոչ մեկը չգիտե, թե ո՞րտեղ է հյուսել, որովհետև խաղ ստեղծել կարելի է ամեն տեղ: Ոչ մեկը չգիտե, թե ի՞նչպես է հորինել, որովհետև երգաստեղծությունն ինքնաբեր կարողություն է: Ոչ մեկը չգիտե, թե ե՞րբ է հնարել, որովհետև յուրաքանչյուր ըռպե հետը բերում է նոր տրամադրություն: Մեկն առիթ է տալի, մյուսը՝ նյութ, մեկը մի միտք է հղանում, մյուսը ձևակերպում է և, տեղնուտեղը, վայրկենական տպավորության և ազդեցության տակ, խոսքն ու ձայնը, բանաստեղծությունն ու երաժշտությունը, իբր երկվորյակ քույրեր, բխում են անսպառ կերպով ժողովրդի մտքից ու սրտից, բնազդաբար և առանց կանխադաս նախապատրաստություն ունենալու:

«Անահիտ», Փարիզ, 1936, № 4, էջ 7:



Ժողովրդական եղանակների կյանքն ընդհանրապես կարճ է, որովհետև նորերը շուտ-շուտ են դուրս գալի, ընդհանրանում են ինչպես հետաքրքրական լուր, և արմատ ձգում այնքան շատ խոր և մեծ, որքան ավելի են համապատասխանում զանազան տեղերի ժողովրդական կյանքի պայմաններին:

Տեական և դիմացկուն են շինական, ծիսական, վիպական, վիպաքնարական, անտունի եղանակները, որոնք դառնում և ամուր կապված են ժողովրդական սովորությունների և ավանդությունների հետ:

Սովորությունների հետ այս կարգի եղանակներն էլ են կորչում:

Պարերգերը հատ-հատ և թուուցիկ զգացումների մի շար են և բովանդակության համաձայն էլ արտահայտություն են ունենում: Բուն պարերգի ստեղծվելն ու մեռնելը մեկ է լինում: Մի քոպեում է հղանում, և երբ անցնում են րոպեն նկարագրող հանգամանքները, տանում են և իրենց հետ համապատասխան պարերի եղանակը:

Յուրաքանչյուր երգ կապված է գյուղական կյանքի մեկ րոպեի հետ և տալիս է միայն այդ րոպեի հաշիվը: Ժողովուրդը ժամանակից և տեղից բաժան երգ չի հասկանում, չի՛ ստեղծում և չի՛ էլ գործածում:

Հայ ժողովրդական երգերը հինգ տեսակ փոփոխություն են կրում — ծավալի, չափի, դիապազոնի, եղանակի և օրնամենտի:

Նույն տեղը, էջ 27—33:



Հայ գեղջուկ երգերի տեսակներն են.

Ա. Շինական, գութանի, վարի, ցանքի, հունձքի, սայլի, կալի, քաղհանի և առանձին՝ ձավար ծեծելու, բուրդ գգելու, կաթ կթելու, ճախարակ մանելու, օրորելու և այլն երգեր:

Բ. Միսական, հարսանեկան, վիճակի, ուխտի, բարեկենդանի երգեր, ծննդի և զատկի ավետիսներ, տոնական երգեր և ուր:

Գ. Վիպական, վիպերգ, վահանապար, սուրպար, ծափապար:

Դ. Վիպաֆնարական՝ անցյալ և ժամանակակից, հանրական և անհատական դեպքերի երգեր:

Ե. Խաղեր զվարճական, երգիծական, հովվական, սիրահարական, զինվորի, մանկական, հոտաղի:

Զ. Օտարության երգեր:

Ժողովրդական մանկական երգեր գրեթե չկան, եղածներն էլ եղանակ չունին, որովհետև հենց որ երեխան 5—6 տարեկան է դառնում, ճիպտոր տալիս են ձեռքին և դաշտ են ուղարկում:

«Անահիտ», 1935, թիվ 6, էջ 27:



Ապագա երաժշտության ուսումնասիրության հիմքը պետք է դառնա ժողովրդական երաժշտությունը (յուրաքանչյուր ազգային երաժշտության համար իր ժողովրդական երգը), ոչ թե գեղարվեստական [պրոֆեսիոնալ], որովհետև գեղարվեստականը նախամտածված, ծրագրված արտահայ-

տություն է, իսկ ժողովրդականը՝ բնական, բուսական. այն-
պես որ ժողովրդականը որովհետև բնական է, պարզ է,
ուրեմն և ժողովրդական երգի կազմութիւնը պետք է լավ
ուսումնասիրել և ապա դորա հիման վրա հենել գեղարվես-
տականը:

Տե՛ս Ս. Գասպարյան, «Կոմիտաս» գրքում: Եր.,
Հայպետհրատ, 1961, էջ 154:


Աշխարհիկ երաժշտութիւնը կապրի հայ գեղջուկի շնոր-
հիվ: Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացե՛ք
և սովորեցեք նրանից:

Կոմիտաս: Հոգիածներ և ուսումնասիրութիւններ:
էջ 195:

Համայնագիտարան խմբագրող մասնագետներու մեր ազ-
գի երաժշտութիւնն անտեսելը ո՛չ իրավունքի և ո՛չ անի-
րավութեան խնդիր է, այլ լոկ չգիտութիւն...

Փարիզի երաժեշտագետ վարպետը սլարտավոր չէ ան-
պատճառ իմանալու, թե հայը երաժեշտութիւն ունի կամ
չունի, և տեսակցութեան ժամանակ կարող է ասել, թե ան-
ծանոթ է, կամ՝ հայը երաժշտութիւն չունի — կամ՝ ունե-
ցածը խառնուրդ է... (Բայց, աշխարհի ո՞ր երաժշտութիւնն
անխառն ու անապակ է...):

Բայց մենք հայերս իրավունք չունինք մեկուկես կարծի-
քով կամ պատմութիւնով ըսվածն ստրկաբար արձանագրել,
գրիչ շարժել և դատել մի պատմական ազգ, որ դեր է կա-



Կոմիտասի պատասխանը Ալ. Մյասնիկյանին

տարել անցյալում, կատարում է ներկայում և դեռ պիտի
կատարե ապագայում, քանի շունչ կա բերանում:

Ազգերու փոխադարձ ազդեցութիւնն անուրանալի և ան-
հերքելի փաստ է, որովհետև անազդեցիկ մնացած ազգ չկա,
յուրաքանչյուր ազգ, ինչ որ չունի, ունեցողներեն, պետք է
զգացած ժամանակ, փոխ կառնե և կազգայնացնե:

Ազգի մը լեզուն ու գրականությունը կարող են ձևավորվել ու զարգանալ՝ օրինակ առնելով ուրիշ ազգերեն, բայց երբ ան ինքնահատուկ լեզու և գրականություն ունի, ունի և ինքնուրույն երաժշտություն:

Հայ լեզուն ունի իր հատուկ հնչավորությունը, ուրեմն և համապատասխանող երաժշտություն:

Իմ հարգելի բարեկամս՝ բժշկապետ և բանասեր Հ. Թիբաբջյան, իր երկտող գրությամբը կհայտնե սա համարձակ մտքերը. «Ըստ իս հայկական երաժշտություն ըսված բան մը գոյություն չունի, բառի գիտական առումով... կը տեսնիմ, որ Փարիզի երաժշտագետ վարպետներն ալ կհաստատեն... Նդածներն ալ ասորա-բյոսզանդական կամ հնդկա-պարսկական ազդեցություն կկրեն»:

Խեղճ հայ ժողովուրդ. ազգ ես և ինքնուրույն այնքան, որքան մյուսները. այդ ոչ ոք կարող է հերքել: Ունիս հատուկ լեզու, կխոսիս: Ունիս հատուկ ուղեղ, կդատես: Ունիս հատուկ մարդաբանական կազմ, որով կզատվիս այլ ազգերեն ու անոնց կազմեն: Սակայն սիրտդ, որ զգացմանցդ աղբյուրն է, քույր չէ եղել. այլ, մի ինչ որ ասորա-բյոսզանդական և հնդկա-պարսկական է եղել:

Ճանապարհ կա, ճանապարհ կա: Բերնեն ականջ շատ կարճ է. բանեն փաստ՝ շատ երկար:

Երաժշտական մեծ վարպետները՝ երբ դասախոսություններս կավարտեի, չէին կրնար իրենց զարմանքն ու հիացմունքը զսպել իրենց համար օտար այս երաժշտության

ծանոթանալով, որ ոչ միայն նորություն էր իրենց համար, այլ նաև ապշեցուցիչ նորություն մը:

Հետաքրքրական էր նաև տեսնել, երբ միջազգային վարպետներ համաժողովն ավարտելեն ետք, աղբյուրներ կը փնտրեին հայ երաժշտության ավելի ևս ծանոթանալու համար... Ավելացնեմ, որ Միջազգային Երաժշտական Ընկերության առաջիկա Համաժողովը կրկին տեղ պիտի տա հայ երաժշտության և ես հրավիրված եմ խոսելու «հայոց երգեցողության ձևի» մասին:

Կոմիտաս: Հոգվածներ և ուսումնասիրություններ,
էջ 45—50, 195—196:

Եկեղեցականն ու աշխարհիկը ունենալով՝ մեր ազգային ամբողջական երաժշտության մասին ստույգ գաղափար կունենանք:

Նույն տեղում, էջ 46:

Պատմությունը գրեթե լուրմ է, ոչինչ չէ հաղորդում հայոց եկեղեցական հին եղանակների, ինչպես և խաղերի մասին:

Ավանդությունը հայոց հին եկեղեցական եղանակների գյուտը կամ կարգավորությունը, որ ամենայն հավանականությամբ գրերի գյուտի շրջանի արդյունքն է, վերագրում է Ս. Սահակին. իսկ մինչև գրերի գյուտը Հայոց եկեղեցիներում երգեցողությունը սաղմոսերգություն էր: Ժամանակ անցնելով սաղմոսերգությանը կից զարգացան Շարականի եղանակները:

Շարականի եղանակներից հետո կամաց-կամաց հանդես եկան Տաղերի, Գանձերի, Ավետիսների և այլ հոգևոր երգերի տեսակներ՝ հանդիսավոր ժամերգության պահանջից:

Սոքա ևս ներբողներ են, միայն ժողովուրդն էր երգում: Սոքա ժամանակի ընթացքում այնքան բազմացան և ճյուղավորվեցան, որ յուրաքանչյուր եկեղեցական տուն հատուկ տաղն ուներ: Սոցանցից առանձին-առանձին ժողովածու կազմվեցավ՝ Տաղարան, Գանձարան, Երգարան անունով: Սոքա սկզբնավորությունը պետք է որոնենք նույն իսկ Ե դարում...

Արդյոք սաղմոսերգությունն ի՞նչպիսի եղանակներով էր երգվում, հայտնի չէ: Հավանաբար ժողովրդական հին եղանակներով:

«Արարատ», 1894, № 7, էջ 222:

Քառյակների դրությամբ են հորինված և մեր թե՛ ժողովրդական, թե՛ եկեղեցական եղանակները, որոնք քույր եղբայր են և նույն կազմությունն ունեն:

«Արարատ», 1898, № 3—4, էջ 112:

Հին երաժիշտները Մանրուսումն ասելով հասկանում էին՝ ուսումն եկեղեցական երգերի, եղանակների և խաղերի մասին:

...Արդյոք կա՞ր առանձին դասագիրք կամ կանոնագիրք իբրև ուղեցույց Մանրուսման, չգիտենք: Մեր ձեռքն են հասած ձայնագրած հոգևոր երգերը, որոնց խաղերի գորությանց թափանցելն անհնար է դեռ. դոքա մեզ համար մեռած նշաններ են. նախնիք սոցա բացատրությունը ղլացել են մեզ հաղորդել...

«Արարատ», 1894, № 7, էջ 223, 226:

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ ՈՒ ԶԱՅՆԱՆԻՇՆԵՐ

Զուտ ժողովրդական է հովվական սրինգը, հանրամարդկային պարկապզդիկը, թութակն ու շվին, մնացածները բոլորն էլ օտար են և մենաշնորհ ժողովրդական գուսանների:

«Անահիտ», 1936, թիվ 1—2, էջ 41:

Խոսեցա հայկական նվագարաններու մասին ևս, մասնավորապես. ծանրանալով փողին շուրջը, զոր բացատրեցի իր ամբողջ կազմով և նաև հոգևոր ու գեղջուկ երգերե նմուշներ նվագելով անոր վրա: Պետք է ըսել, որ ան ևս, ինչպես հայ երաժշտության մյուս առանձնահատկությունները, խոր տպավորություն գործեց ունկնդիրներու վրա: Իմ կարծիքով, փողը նվագական երաժշտության հիմնաքարն է, և ունի այն տեսակ առանձնահատկություններ, զորս ոչ մի ազգի նվագարան չունի: Անոր հնչյունները ամենեն մոտիկն են մարդկային սրտին, ամենեն հարազատ արտահայտիչը անոր բոլոր զգացումներուն. մարդ անոր պարզ ծակտկիներուն մեջ կրնա արտաբերել իր հոգին իր բոլոր զգացումներով: Եթե կատարելագործվի այս նվագը՝ իր զանազան սեռերով, ես վստահ եմ, թե մենք այն տեսակ շնչական հրաշալի նվագուրդ մը կունենանք որ ընդունակ է բնությունը արտահայտելու իր էական գույներով, կյանքը իր հարազատ շարժումներով, միտքը՝ իր սեփական խորհուրդներով, և սիրտը՝ իր իսկական հուզումներով, որովհետև փողը միակ նվագարանով կրնա բազմաթիվ ձայներու հնչյուններ հանելու, ինչ որ կարելի չէ գտնել ուրիշ նվագարաններու մեջ:

...Հայոց մեջ ազգային նվագարանը փողն է, որ, պետք է անգամ մըն ալ կրկնեմ, խորունկ ազդեցություն գործեց

բոլոր համաժողովականներուն մեջ, իր պարզության մեջ պարփակած վեհությամբ:

Կոմիտաս: Հոգվածներ և ուսումնասիրություններ: էջ 197—198:



Իրավ է, ես գտել եմ հայ խազերի բանալին, և նույնիսկ կարդում եմ պարզ գրվածքները, բայց դեռ վերջակետին չեմ հասել, զի յուրաքանչյուր խազի խորհրդավոր իմաստին թափանցելու համար, նույնիսկ տասնյակ ձեռագիրներ պրպտելով, երբեմն ամիսներ են սահում:

Երկու խոսքով ամփոփեմ, թե ինչ տարրեր ունի հայ խազաբանությունը.—

Ա. Ձայնաստիճանի խազեր.

Բ. Ձայներանգի խազեր.

Գ. Ձարդախազեր.

Դ. Ձայնաճի խազեր.

Ե. Ամանակի խազեր.

Զ. Բանալի խազեր.

Է. Առոգանության խազեր.

Ը. Կետադրության խազեր.

Թ. Ոճական խազեր.

Փ. Կապող և զատող խազեր.

ԺԱ. Կիսանիշ խազեր և այլն:

Մի այսպիսի ուսումնասիրությունը կատարելության հասցնելու համար պետք է ներհոսն լինիլ տիրապես սա հիմնական ուսմունքներին ու գիտություններին. տաղաչափության, վանկաչափության, բառաչափության, տողաչափության, առոգանության, շեշտադրության, կետադրության, խազաչափության, խազագիտության, լեզվին (բառերի իսկական և հին առման) իմաստասիրության (երկրաչափության, թվաբանության, աստղաբաշխության և երաժշտու-

թյան՝ հին առմամբ), խազերի ծագման, զարգացման, անկման և արդի պատմության, համեմատական խազաբանության և այլն և ապա կարելի է՝ գաղտնիք երևան հանել: Թող հայ հասարակությունը ներող, մանավանդ համբերող լինի՝ մինչև որ հնարավոր չափով, կատարելապես վերջացնեմ իմ տասնվեց ամյակից ավելի տևող տաժանագին ուսումնասիրություններս: Հույս ունիմ, թե մոտիկ ապագայում, առանձին հատորներով, հասարակության սեփականություն պիտի դառնա:

1910, մարտ 15, էջմիածին: «Տաճար», 1910, թիվ 10, էջ 311:

ՊԱՐ: ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

Մարդկային կյանքի աչքի զարնող երևույթներից մեկն էլ պարն է: Պարն արտահայտում է յուրաքանչյուր մի ազգի բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը. որովհետև, թեպետ մարդ պարում է ազատ կամքով, բայց մարմնի տեսակ-տեսակ շարժումներն ակամա մատնում են ներքինը:

Հայ գեղջուկ պարը կիրք զարթեցնող շարժումներ չունի, և զգացումներն արտահայտվում են ոչ թե մեղկ, մոլի, կատաղի, հրապուրիչ և այլն շարժումներով, այլ պարերգերի միջոցով...

«Թատրոն և երաժշտություն», Բաքու, 1910, № 3—4, էջ 26:



Հայոց ազգային պարերը խմբական են: Խմբապարը շատ խորունկ արմատ է ձգել հայ գեղջուկի մեջ, որ հինը պահում է և նորը հորինում:

Պարն՝ ամենահիմնական նշանակությունն ունեցող երեւոյթ մըն է. ամեն գեղարվեստ պարի մեջ կպարտկվի: Իբրեւ շարժում՝ պարը շատ կարեւոր դեր ունի ապագա դպրոցական կյանքի գեղարվեստական շարժումի մեջ, վասնզի պետք է գիտենալ, թե ամեն գեղարվեստ,— ինչպես երաժշտություն, քանդակագործություն, ճարտարապետություն և այլն,— շարժում է: Ամեն կյանքի մեջ պար կա: Արդեն ամբողջ տիեզերքի կյանքը պար չէ՞:

Երգեցողությունն ու պարը կառույցացնեն, կմարզեն մարմինը: Բոլոր գեղարվեստները շարժումի մեջ կարտահայտվին: Ուրեմն մասնական երգեցողությունն ինչքան կարեւորություն ունի ապագա քաղաքակրթության մեջ:

Կոմիտաս: Հոգվածներ և ուսումնասիրություններ, էջ 55, 63, 65:



Ամբողջ մտատանջությունն է հասցնել աշակերտներ, որոնք դպրոցներու մեջ տեղ գրավեն, նվիրվեն ազգային երաժշտության ուսումնասիրության, տարածեն ժողովրդի մեջ հայ երաժշտության ոգին, որպեսզի ժողովրդի մեջ ազգային երաժշտության խոսքը մարմնանա և անոր ազդեցության տակ ժողովուրդը թոթափելով իր թուլը պատյանը, մտնե վերականգնանքի շավիղին մեջ: Ինչքան քաղձալի էր ունենալ այս նպատակով առանձին վարժարան, որոնք միջոցով մեծ արդյունք կարելի կըլլար ձեռք բերել:

Թ. Ազատյան «Կոմիտաս», Կ. Պոլիս, 1931, էջ 149:



Երգեցողությունը սրտին հետ կապ ունի, որ ուղղակի հոգին կերթա: Ուսուցիչ պարոններ՝ ու քույրեր՝ զգուշությամբ և երկուղաձուլությամբ մոտեցե՛ք դաստիարակության գործին: Խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է. սխալ ուղղությամբ՝ ազգ մը կխորտակեք վերջը:

Կոմիտաս: Հոգվածներ և ուսումնասիրություններ, էջ 67:

ԻՐ ՄԱՍԻՆ

Ինձ համար չկա ուրիշ երկինք՝ քան իմ ժողովրդի հարազատ հոգին:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 243:

Բավական երկար համբերեցի. այսուհետև եթե ես էլ չխոսեմ, քարերը կաղաղակեն: Բա՛վ է այս տանջանքը, կարծես բոլորն էլ երգվել են միջնադարյան ինկվիզիցիայի դատաստանը վերականգնել՝ դատել մարդու չարած հանցանքը, սպանելուց հետո, արդարացնել մարդուն, մեռնելուց հետո:

...Քննություն խոսքը մեզ համար գոյություն չունի, բավական է լսել մի մարդու մասին քսու զրպարտություն, արդեն անպատճառ հետևում է հավատալ, որ իրավ այդ կատարվել է... Վերջապես ես այնքան զայրացած եմ, այնքան սրտնեղած, որ ոչ մի խոսք չեմ գտնում զայրույթս, զարմանքս, չարած հանցանքս, արդար, անբիծ, անարատ լինելս արտահայտելու:

Վա՛յ ինձ, ափսո՛ս իմ երիտասարդ հասակիս, մե՛ղք իմ

During the past few years, the number of people who have been arrested for drug offenses has increased significantly. This is due to a number of factors, including the increased use of law enforcement resources, the increased use of drug testing, and the increased use of community-based programs.

RECEIVED
JAN 10 1964

[illegible][illegible][illegible]

The above is a list of the names of the persons who have been
 appointed to the various positions in the Department of the Interior.
 The names are listed in alphabetical order of the last name.
 The positions are listed in the order in which they are filled.
 The names of the persons who have been appointed to the positions
 are listed in the order in which they are filled.

~~SECRET~~

● 2014 年 12 月 1 日起实施的《上海市生活垃圾管理条例》规定，本市生活垃圾按照可回收物、有害垃圾、湿垃圾和干垃圾四类分类投放、分类运输、分类处置。

1. 姓名: 王德胜 性别: 男 年龄: 45 职业: 教师 住址: 北京市朝阳区 邮编: 100000

[illegible]

地址: 广州市天河区五山路 308 号 邮编: 510640
 电话: 020-87556000 传真: 020-87556001 电子邮箱: info@china-robot.com

[illegible]

It is requested that you advise the Bureau of the results of your investigation.

ևտքն ալ, որքան ատեն որ ուժ զգամ երակներուս մեջ. ոչ մեկ խոչընդոտ չի կըրնար կասեցնել զիս իմ առաքելությանս մեջ. որու նվիրականությանը համոզված եմ ես բոլոր սրտովս:

Կոմիտաս: Հոգվածներ և ուսումնասիրություններ: Եր., Պետհրատ, 1941, էջ 198:

...Գնում եմ հենց այսօր գյուղերը ճանապարհորդելու և ժողովրդական ու եկեղեցական հին եղանակներ ժողովելու:

Կորգանյանին գրած նամակից
1904, 22/7, ս. էջմիածին

В. Д. Крганов. Статьи, воспоминания, путевые заметки. Библиография, Ер. 1968, стр. 20.

(Հատվածներ նամակից)

Այժմ տանս «Շրեդերի» ֆիրմայի մեծ դաշնամուր ունիմ: Դու կզգաս իմ ուրախության չափը, երբ առաջին անգամ դաշնակը հարայ-հրոցով սենյակ բերելուց, սարքվելուց, մարդոց ճանապարհ դնելուց հետո մենակ մնացի: Աչքերիս չէի հավատում, որ վերջապես ես էլ մարդու հաշիվ եմ դառնում, հարմարություն ունիմ աշխատելու, աշխատելու, էլի աշխատելու:

Ուրախությունիցս քարացել էի մեկ վայրկյան, ապա արտասուքի հեղեղ սկսավ գլորվել աչքերիցս. ես էլ, սիրտս էլ, միտքս էլ, կյանքս էլ հանգստացան. հաշտվեցա, որ այժմ աշխատելու միջոց ունեմ և այս անհրաժեշտ միջոցը:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 118:

...Իմ ազնիվ, հավատարիմ նվագարանս, որ հասարակ սնդուկ է, մետադե թելով, նա անգամ ինձ հասկանում է, և ես իմ սիրտը բաց եմ անում նորա առաջ: Նա ինձ հարբեցնում է՝ որպես ինքս ինձ, նա ինձ մխիթարում է իմ սրտից բխած հեծկլտանքների արձագանքն ինձ անդրադարձնելով, և ես էլի մխիթարում եմ ինձ և ասում, որ կա բնության մեջ մի ազնիվ բան՝ գեղարվեստը՝ որ ամենքին մատչելի չէ և հենց այնտեղ եմ գտնում իմ անդորրությունը ու հանգստությունը և զգում, որ մի վարկյան հեռու եմ սլացել աշխարհի անօրենություններից:

Նույն տեղում, էջ 129:

Ո՛չ խելք են թողել, ո՛չ միտք, անհանգիստ բան եմ եղել, հոգիս բերանս է հասել. երևակայիր, որ շրջապատված եմ թանձր մառախուղով, ուզում եմ լույս, պայծառ տեսնել, հեռանալ վեր, շատ վեր, այրող արևի հետ ապրել, բայց ճանապարհ չեմ գտնում, անիրավ օդի մեջ խեղդամահ եմ լինում: Մարդ չկա, որին բանաս սիրտդ, մարդ չկա, որից մի բան լսես. նստում եմ առավոտից մինչև իրիկուն բուրջին պես իմ սեղանի առաջ, գրում ու գրում... Գալիս է հանգստի ըոպե, մարդ ես որոնում, որ գրածդ երգես, նվագես ու կարծիք լսես,— չես գտնում: Դուրս եմ գալիս ու վագրի պես այս ու այն կողմն եմ շուռ գալիս մեն-մենակ, իմ պարտիզում ու տանիքի վրա: Ես զարմանում եմ, թե ինչո՞ւ մինչև այժմ դեռ չեմ խելագարվել այս մթնոլորտի խարդախ վայրերում:

(Հատված նամակից)

Նույն տեղում, էջ 123, ս. էջմիածին, 1909:



Գործերս հաջող են. այժմ կզբաղվեմ հայ հին խաղերու տեսումնասիրությամբ և հուսով եմ շուտով կարող պիտի լինիմ գաղտնիքը բանալ և գեթ ժԳ դարի եղանակներն ատուգել:



Երեկույթի (Փարիզում) վեհ գաղափարն ինձ այնպես է ոգևորել, որ գրչով արտահայտել չեմ կարող. մի բազմա-կողմանի բան անենք, որ երևա հայի մտածող և զգացող հոգին: Ես այսպես եմ մտածել: Որպեսզի հայ երաժշտու-թյունը լավ ըմբռնեն, նախքան երեկույթը կազմելը մի դա-սախոսություն անել հայ ժողովրդական երաժշտության մա-սին ընդհանարպես և մասնավորապես էլ եղանակների կազ-մության մասին, ապա նույնը՝ ժողովրդական երաժշտու-թյունը ցույց տալ արդի գեղարվեստական միջոցներով բազ-մաձայնի վերածած:

Հատվածներ նամակից, 1904 թ.

Պատմա-բանասիրական հանդես: 1918, № 1, էջ 249, 253:



Ես այժմ երգերի տպագրությամբ եմ զբաղված և շա-քունակ նորանոր դիտողություններ եմ անում. այնպես, որ երբ գործը վերջանա շատ հետաքրքրական է լինելու, թե ինչպես մեր ժողովրդի ամբողջ սիրտն ու հոգեկան ներքին ու արտաքին կյանքը խորապես դրոշմված է ձայների և տա-ղաչափության մեջ:

(Հատված նամակից: Բեռլին, 1907 թ.)

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 122:



Ուսումնառության տարիներին՝ Բեռլինում

...Ես եկել եմ, սիրելիս, միայն շատ կարճ ժամանակով այստեղ: Ձեռագիրներ եմ նայում և գեղջուկ երգեր հավաքում: Իսկ սեպտեմբերին պիտի գտնվեմ անպատճառ Պոլիս, ուր արդեն հաստատվել եմ և գործ եմ սկսել: Ունեմ ինձ համար անձնական դպրոց, ուր պատրաստում եմ խմբավարներ և երգիչներ: Ունեմ 300 հոգուց բաղկացած երկսեռ խումբ, որի անունն է «Գուսան»: Համերգներ եմ սարքում և դասեր տալիս, ահա կարճակի իմ կյանքս՝ նոր կյանք:

Հատված Հ. Թումանյանին գրած նամակից
1913, 19/7, ս. էջմիածին
«Սովետական գրականություն», 1962, № 10, էջ 56:

ԿՈՄԻՏԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Խ. Աբովյան

Վաղ պատանեկական օրերես մինչև այսօր, իմ հոգու հսկիչն է ան և իմ ուսուցիչը... Հոգվույս մեջ ամենօրյա արձագանքողը... Աշխատիլ, տքնիլ, պայքարիլ՝ միայն և միայն ժողովուրդիս և մարդկության համար... Ես երբեք չեմ կարող ապրիլ առանց Աբովյանի... Ուսանողության ատեն, երբ առաջին անգամ «Վերք Հայաստանի»-ն կարդացի, հոգվույս մեջ այնպիսի ալեկոծություններ զգացի, որ երբեք չեմ մոռնար:

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 237:

Մակար Եկմալյան

Մակար Եկմալյանը մեր երգեցողության ամայի անդաստանի մեջ ներդաշնակության անդրանիկ բուրաստանը

տնկեց: Սրտանց ուրախ ենք, որ հայերս այժմ կարող ենք պարծել, թե մենք էլ ետ չենք մնացել վսեմ գեղարվեստի և կատարելագույն երաժշտության զարգացումից:

«Արարատ», 1898, № 3—4, էջ 117:

Ռուբեն Զարդարյան

Ռուբեն Զարդարյան... մեկն է հայ գրականության սակավաթիվ դեմքերեն, որոնք ճանչցած են գավառը իր բնական և հոգեկան հարստություններով և իրենց գործը կերտած են այդ հարստություններուն վրա, որոնք ժողովուրդին են: Զարդարյան... իր սիրտը կապած է ժողովուրդին սրտին... Իր միտքը կապած է ժողովուրդին մտքին հետ: Ժողովուրդին ղավակն է Զարդարյան:

«Սովետական արվեստ», 1965, № 4, էջ 35:

Ա. Շահմուրադյան

Այժմ եգիպտահայերու պատվական հյուրն է ընտիր երգիչ Շահ-Մուրադյանը, որու ունեցած աննախընթաց հաջողություններն ինձ անչափ ուրախացրին և կարծեմ իրավամբ, երբ օտարները մեր մասին գիտության և գեղարվեստի միջոցով է, որ լավ գաղափար կկազմեն և այսպիսի գործունեությունն անջինջ ու քաղաքակիրթ դեր ունի: Շահ-Մուրադը, որ հայ հողին սերմն է, հայ ջրովը անված ու հայ աթևով կիզված, ունի ընտիր, պայծառ ու եռանդուն ձայն: Հայերուս համար որքան պարծենալիքներ պիտի առթե

տակավին նա, որ իր գործունեության գարնան շեմքին վրա է կայնած...

Վահան Մալեզյանին գրած նամակից
1912, 24/2, Կ. Պոլիս
«Սովետական արվեստ», 1962, № 10, էջ 56:



Ջուզեպե Վերդի

Վերդին այն հազվագյուտ երաժիշտներից մեկն է, որի մոտևան հավատարիմ մնաց նրան մինչև խորին ծերություն: Ամբողջ աշխարհը զարմացավ, երբ 85 տարեկան ծերուկ երաժիշտն իր վերջին ստեղծագործությունը հրապարակ հանեց...

Վերդին ոչ միայն երաժշտական հանճար էր, այլև տոկուն բնավորություն ու ինքնաքննադատ: Նա ոչ միայն անցյալի երաժիշտ էր, այլև ապագայի: Նա նվագերգության պատմության մեջ գրավում է մի ընդարձակ տեղ:

«Տարազ», 1904, № 23, էջ 208:



Վազներ

Վազները 19-րդ դարի ամենաբարձր դրամատիկ երաժիշտն է: Վազները բոլոր դարերի ամենամեծի և կենտրոնացած մտածող երաժիշտներից է: Վազները շատ հանճարեղ և բարձրաթիշ բանաստեղծ է. Վազները երաժիշտ-բանաստեղծ է:

...Վազներն արավ այն, ինչ կամենում էր: Չի կարելի նորա երկերից երաժշտությունը պոկել ու այնպես նվագել, որովհետև այն՝ բանաստեղծությունից և պատկերից ան-

ՄԱՅԱԿՈՒՄ Հրատարակչական Մասնաձեռն թ. 10

ԿՈՍՄՏԱՍ ՎԱՐՈՒԼՊԵՏ

ՆԱԽԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Dr. Hovhannak

Քիչից քիչաբարձր հանգրվանի,
հիմա՛նք քիչ հեղինակը,
Յո՛ւն ևս մեզ չի քիչ հեղինակը,
Քիչից քիչ հեղինակը,
որի՛ք հանճարը հիմա՛նք հանճարը,
մեզ հանճարը հիմա՛նք հանճարը,
Քիչից քիչ հանճարը հիմա՛նք հանճարը,
մեզ հանճարը հիմա՛նք հանճարը

Խոստովանություն

891.99
4-68

50 դրամ

Կ. Պոլիս, 1939 թ.

բաժան է: Նորա երկի մեջ միասին և համերաշխ են գործում սիրտ, միտք, աչք, որոնք անբաժան միություն են ներկայացնում:

«Տարազ», 1904, № 8, էջ 57:

Ֆրանց Լիստ

Հանճարեղ դաշնակահար Ֆրանց Լիստը, որ յուր կյանքի ընթացքում ոչ մի մրցակից չունեցավ, ծնվել է Հունգարիայում:

Լիստի իսկական կրթությունը եղավ իր եռանդուն ջանասիրությունն ու անհատ սերը դեպի երաժշտությունը... Լիստի նվագահանդեսը ամբողջ Փարիզը դղրդացրեց և հասարակությանը անխտիր անսպասելի կերպով ոգևորեց... Իբրև անզուգական դաշնակահար նա մի այնպիսի անուն ունեւր, որ կարող էր հենց դրանով միայն ապրուստ ճարել... Իբրև երաժիշտ էլ սկսել էին նրան հռչակել ու գովասանքով խոսել նրա մասին:

Երիտասարդ երաժիշտ Լիստը համոզված էր, թե պետք է երաժշտությունը բանաստեղծական մտքեր վերարտադրե և Բերլիոզի հետ ձեռք-ձեռքի տված նախանձախնդիր եղան ծրագրող, այսինքն նկարող երաժշտության:

Փառքի, պատվի և շքանշանների կողմից հաղիվ թե մի ուրիշ երաժիշտ նրան հավասարված չին:

Ոգևորված աշակերտների և համակրողների բանակները մեծ վարպետին առաջնորդում էին մեկ տեղից մյուսը:

Լիստն ազնիվ քաղաքացի, անդուլ երաժիշտ և քարի քրիստոնյա եղավ յուր ամբողջ կյանքի ընթացքում:

«Տարազ», 1904, № 19, էջ 173—174:

ԿՈՄԻՏԱՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Տարիների ընթացքում, ժողովրդական երգերի հավաքման ու մշակման ղուգընթաց, մեծ Կոմիտասը, ընդհուպ մինչև իր ողբերգական հիվանդությունը, գրել է քնարական գողտրիկ

բանաստեղծություններ: Նրա այդ սիրտ տաղերը, որոնք ժողովրդական երգերի շունչն ու պարզությունն ունեն, բացում են նրա հոգեկան աշխարհի հարստությունը՝ մի այլ կողմից:

Նրա այդ բանաստեղծությունները, որ ամփոփված են եղել սևագիր տետրում և առանձին մարդկանց ալբոմում, գրվել են 1905—1914 թվականների միջև ընկած ժամանակամիջոցում: Կոմիտասի կենսագիր Թ. Ազատյանը հավաքել է այդ ամենը մի ժողովածուի մեջ, որը «Կոմիտաս Վարդապետի քնարերգությունները» խորագրով 1939 թ. լույս է տեսել «Մշակույթ» հրատարակչության կողմից: Դրանց մի մասը նույն թվականին տպագրվել է նաև Փարիզում հրատարակվող «Անահիտ» ամսագրում: Վերջիններս նշված են բերված օրինակների տակ:

«Ձեռագրին մեջ,— գրում է կազմողը,— տեղ-տեղ (լուսանցքներու վրա) երաժշտական խաղերու գոյությունը, բառերու նրբախիղճ ընտրությունն ու ներդաշն հանգավորումը ենթադրել կուտան, որ Կոմիտաս վրդ. շատ հավանաբար մտադրած է զեթ մասամբ եղանակավորել նաև իր այս ինքնաստեղծ քնարերգությունները, որոնք կարծես բյուրեղացումն են ժողովրդական երգերուն ու վերստեղծումը առավելապես արևելահայ բարբառներու բնատոհմիկ արտահայտությանց»:

Ընթերցողներին ճաշակ տալու համար, բերում ենք այստեղ Կոմիտասի քնարական բանաստեղծություններից մի քանիսը (ամբողջովին կամ հատվածաբար), ցույց տալու համար, որ «Երգահան ու երգասաց վարդապետը իր քնարական ստեղծագործություններովը ետ մահու կհայտնվի միանգամայն խորազգաց բերթող մը»:

ՄԱՅՐԻԿԻՍ ՕՐՈՐԸ

(Հատվածներ)

Դեռ արգանդում՝ մայրիկըս ինձ
Վարդ էր բուրում, ոռոգում.
Եվ իր հոգում այգ-արևով

Գուրգուրում ու նորոգում:
 Ծընած օրեն մայր շըրթներով
 Սեր էր վառում օրորում,
 Արև-լուսին հոգվով-մըտքով
 Նըկարում ու բոլորում:
 Հայր զարկերով արի-արի
 Խոսում էր իմ երակում,
 Մայր կաթերով արյուն-արյուն
 Հոսում էր ու կերակրում:

Քեզի տեսնեմ, ի՛մ հատորիկ,
 Կյանքիս ուղին սիրազեղ,
 Հայտ ու անհայտ դու որոնե,
 Քեզի՛ լինին իրազեկ:
 Մի՛ թափառե կյանքի պարապ
 Անապատում դու իզուր,
 Քե՛զ պահապան սուրբ հավատո
 Լուսոյ, սիրո, Լույս ու Հուր:
 Օրի՛կ օրին,
 Իմ Անուշին:

Գիշեր-գիշեր, լուսնե-լուսին
 Մըտքիս ծովը խորացավ,
 Ցորեկ-ցորեկ, արև արև
 Հոգուս հովը զորացավ:
 Մորըս կըտակն ալիք-ալիք
 Սըրտիս ավանդ պահեցի,
 Երկրե-երկին, երկնե երկիր
 Ազատ-արձակ սահեցի:
 Օրի՛կ օրիկ՝
 Գարուն նորիկ:

Երգ ու տաղեր սարեն, ձորեն
 Տունկ ու ամպով զարթելով

Տուն ու տաճար սըրտի խորեն
 Բույր ու ձայնով բարդելով:
 — «Օրե՛ր սարին
 ու տաճարին»:

Կանաչ երկրի մըթնոլորտը
 Պատառ-պատառ հաղթեցի,
 Կապույտ երկնի լուսո խորը
 Կատար կատար գաղթեցի:
 Վարդի բույրով, լույս համբույրով
 Գիրկըս թըռավ Մայրիկըս,
 Ձեռքես բըռնեց, առավ տարավ,
 Տարավ ցուցուց Հայրիկըս:
 — «Երնեկ օրին՝
 Երկնի խորին»:

ԱՇՈՒՆ

Ծառեր, թըփեր լեցուն միրգ,
 Մառան տարան գիրկ ու գիրկ,
 Աշուն սընավ:
 Սաղարթ-սաղարթ սարսելով,
 Ոսկի տերև դարսելով,
 Աշուն քընավ:
 Տարափ ու բուք փըշելով,
 Վայուն-մայուն ճըշելով
 Աշուն ծընավ:

ՎԱՐԴԻԿՍ

Խըցիկիս մոտ ջուր եմ արել մարգ ու մարգ,
 Վարդիկիս հոտ հուր էր դառել բարկ ու բարկ-
 Ելա անհոգ սարերի գոգ շըրջելու,
 Սիրու ամպեր բոլորեցին թըրջելու:

Մահիճիս քով հուր եմ վառել գողունի՝
Վարդիկիս քով դուռ էր ճարել գողունի.
Լանջես ի վեր սերն ու շիթեր շաղալու՝
Երազ-հույզեր նվագելու, խաղալու:

Ելա արագ հույս շավիղով՝
Մենավորիկ բերդիկը դողաց
Հովի բարակ-կույս տավիղով՝
Վարդենիկիս երգիկը շողաց:

«Անահիտ», 1939, № 3, էջ 7:

ՃԵՐՄԱԿ ՀԵՐ, ԳԱՐՈՒՆ ՍԵՐ

Ես ու դու սեր ենք,
Մեկ սըրտի տեր ենք,
Նըռան ճյուղերով բոցուն,
Սիրո տաղերով արբուն:

Տես իմ հեր՝

Ճերմակ սեր.

Որ պաղել էր շատ ձրմեռ
Սըրտիդ բազում դալարեց:

Տես, քու սեր՝

Գարուն էր՝

Որ խոցեց իմ խոց ու վեր,
Սըրտիս խազում ծավալեց:

ՀՈՎ ՈՒ ԾՈՎ ՍԵՐ

Կապույտ երկինքն էր եռում,
Կարմիր երկիրն էր ջեռո՛ւմ.
Հուր ու Հարավ հեվ ու հեվ
Թախիծ ու տոթ էր բերում:

Հոգիս եկավ հովի պես,
Սերը սըրտում ծովի պես.
Ծոցին վարդեր՝ ասաց. տե՛ս,
Քեզ սիրելու եկա ես:

Վարդ ու քրքում էր բուրեց.
Սիրտըս սըրտում գուրգուրեց.
Արև-լուսին պագերով՝
Երազ-երազ համբուրեց:

Հոգի՛ս, ասաց ու ծըռեց.
Ծամեր բացավ ու փրռեց.
Ստինք-ստինք փարելով՝
Հույզըս մարավ ու լըռեց:

ԳԱՐՈՒՆ

Հալուն, հալուն,
Սարին, ձորին խոսելեն,
Երես-երես,
Քարեն, հողեն հոսելեն՝
Գարուն իջավ մըխալով,
Առուն շիջավ ծըխալով:

Բադիկ տեսա՝
Լուսին-ցողին՝
Լողիկ-լողիկ արբելեն՝
Կանաչ տափերին:
Առուն փեսա՝
Հողի գոգին՝
Դողիկ-դողիկ տարփելեն՝
Ծաղիկն ափերին:

Հալուն-հալուն,
Ծառի, ծաղկի հոտերով,
Երեք-երեք,
Ծովի, ցամաքի մոտերով՝
Առուն ուռավ՝ վերացավ,
Բուր ու առ դարուն հեռացավ:

ՍԵՐ-ՀՈՎԻԿ

Շընչե՛, հովիկ,
Դու թոթովիկ՝
Կյանքի սերը՝
Սըրտի բերը՝
 Պարուրելով,
 Ծարուրելով՝
Ծովի ալքեն
Ամպի ծալքեն,
Ալ ծաղկունաց
Հըրա հալքեն,
Թող նա վառե՛ իմ ծոցիկին ոսկի լույս,
Հողահարե՛ դու բոցիկին, որ իմ հույս՝
Լանջիս վերա
Հավետ եռա՛:

ՔՈՒՆԵՐԱԶՈՒՄ

Եվ ա՛յս գիշեր, քո երազում, տեսել ես որ՝ ես ու դու՝
Երես-երես ճանաչել ենք սիրո ծովում իրարու...

Քո սուրբ սերը սար է դառել
Դալարագեղ, երկնածրրար ու բեղուն,
Գըլխիդ վերը ամպ է շարել՝
Դալարահեղ, կամարակապ ու զեղուն:

Սարի շողեն, ամպի քողեն՝
Մենավորի ոգին ծընել, դեգերել,

Ձեռիս մի բույս՝ կանաչ ու կույս՝
Խորհրդավոր ձորեն քաղել ու բերել:

Մաղիկ-ծաղիկ քեզ որոնել՝
Ամպի տակին՝ արևծագին շունչ առել,
Ջըրի մոտին, կանաչ խոտին՝
Գըլխիդ վերև ծիրան-գոտին փունջ արել:

ՄԵՆԱՎՈՐ

Երբ անտառում լուսնի ծովեր,
 սիրո հովեր,
Սողոսկեցան ծառածառ
 ու սարեսար,

Եվ ամեն մարդ՝
 Գըտավ մի վարդ
 Սըրտեկին զարդ,
Ես մենավոր մտա տուն,
Ինձ մըխիթար գրտա քուն,
Որ աչերուս կապեց մեջ,
Ու տարածեց վերարկուն:

ԻՄ ԵՐԱԶՈՒՄ

Եվ ա՛յս գիշեր իմ երազում, քեզ հետ մեկտեղ պարեցինք,
Սեր-ոգիներ սուրբ սեղանում մեղրամոմեր շարեցին,
Ոսկի-արծաթ ամպի ծալեն նուրբ ու բարակ քող ճարեցինք,
Ինձի-քեզի կարմիր-կանաչ սիրո շապիկ կարեցին:

ԱՇՈՒՆ ՕՐ

Ահուկ ամպեր վար եկան
Օրան, օրան,

Սարի վերա շար եկան:
Ծաղեց առավոտ,
Պաղեց, սառավ օդ:

Գոռաց երկինք—բուք արավ,
Հեաց, հեաց.

Ծերուկ երկիր սուգ արավ:
Ճաքեց հեռուն ամպ,
Երկիր դողաց բա՛մբ:

Բողբոջ արե շող կապեց
դողաց, սողաց.
Արեն ամպից քող կապեց,
Վառեց լեռան լանջ,
Լեռան ցավատանջ:

Տեղաց անձրև մաղ տալով,
Մարմանդ-մարմանդ.
Հոգնած տերև շաղ տալով:
Երկիր քուն դըրավ,
Եվ թռչուն թռավ:

Հուզված առուն փախ տվավ
Սողուն-սողուն,
Չորում մըշուշ կախ տվավ:
Քամին հլավ վեր,
Արավ տարոսեր:

Մոխիր ամպեր ժիր եկան
Սարի վերա ցիր եկան:
Դալուկ-դալուկ,
Հալեց աշուն օր
Կյանքիս սեավոր:

«Անահիտ», 1939, № 3, էջ 4:

ԱՍՏՎԱՄ ԻՄ

Սիրո սերմը. դատեցիր,
Հըրո ջերմը պատեցիր.
Հողին շունչըդ փըչելով՝
Հոգի կյանքըդ կաթեցիր:

Եվ արևըդ լուսին մարմնես մաղեցավ,
Եվ իմ հոգին Հոգուդ ցողով շաղեցավ,
Իմ սըրտիկի սերն ու բոցը, սիրո խոցը՝
Ամպերի մեջ, որպես կայծակ սահեցավ:

Անուշ գարուն
Ծաղիկ բողբոջ:
Զվարթ առուն,
Կայտառ խոխոջ,
Կանաչ դալար
Ծիծաղ ցողիկ
Վըտակ դալար,
Դուք ո՞ւր թողիք:

Յորեն, ցորեն՝ հատիկ, հատիկ՝ քու ճըրագով դատեցիր,
Որոմ, որոմ՝ մատիկ-մատիկ՝ հուր կըրակով դատեցիր.
Գլխիդ համար ցամաք երկրում տեղ ու դադար չունեցար
Հոգու ջահըդ՝ խաչիդ վերա՝ երկնի սիրով պատեցիր:

«Անահիտ», 1939, № 3, էջ 7:

ՀԱՆԱՊԱՐՀ

Բարակ ուղին սողալով,
Ոտի տակին դողալով՝
Ճամփի ծայրին բուսել է
Կյանքի ծառը շողալով:

Ի՞նչ լայն սիրտ է, որ ունի,
Այս ճանապարհն Անհունի...
Մարդու, բուսի, գազանի
Եվ թևավոր թռչունի:

ՇՈՒՇԱՆ ՍԻՐՏ

Շուշան սիրտը մաքառեց տարի-տարի՝
Կյանքիդ արև օրերում:

Սուսան սերը թափառեց արի-արի՝
Լանջիդ լուսին-ձորերում:

Շըրթունքները մանուշակ՝ դալար-դալար
Սիրո գարուն գովանի,

Գանգուր հերը մանուշակ՝ դալար-դալար
Համբույրներուն հովանի:

Սերը՝ սեր էր ծագեցավ՝
Պտույտ-պտույտ դափնիների ճյուղերով,

Սիրտը՝ սիրտ էր հագեցավ՝
Կապույտ-կապույտ քալասանի յուղերով:
«Անահիտ», 1939, № 3, էջ 5

ԱԿԱՆԱՎՈՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԵՎ ՀԵՏՆՈՐԴՆԵՐԸ ԿՈՄԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ

Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է. նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարստությունը:

Ի՞նչով է արժանացել նա մեր ժողովրդի այս բարձր գնահատանքին: Նա ո՛չ օպերա է գրել, ո՛չ օրատորիաներ, թերևս մի քանի արիաներ կամ ումանսներ միայն: Բայց ավելի մեծ գործ է կատարել, քան այդ բոլորը: Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելոսը՝ ինքնուրույն, ինքնատիպ և անաղարտ: Նա հիմն է դրել ազգային երաժշտական կուլտուրայի:

Ա.Վ. ԽՍԱՀԱԿՅԱՆ

Երկեր: Հտ. IV, Եր., Պետհրատ, 1959, էջ 87:



Նա դիմեց հայ երգի ակունքին՝ հայ շինականի, գեղջուկի, աշխատավորի երգին, Արարատյան դաշտի, Շիրակի, Վանի, Մուշի ժողովրդական երգերին: Սրտով հասկացավ նա, որ հայ երգի ոճը ժողովրդի այդ երգերի մեջ պիտի թաքնված լինի: Պիտի մաքրել այդ երգերը օտարամուտ ժանգից ու անտեղի դարձերից, որոնք աղարտել էին հայ երգը: Եվ ցույց տվեց աշխարհին: Կուլտուրական ժողովուրդները՝ ուսանելը, ֆրանսիացիները, իտալացիները ընդունեցին հայ երաժշտության ինքնուրույնությունը և նրանք հիացմունքով տեսան մի նոր գեղեցկություն, մի նոր երգ:

Այսպիսով՝ մեր շինականի երգերը՝ աշխատանքի, բնության, սիրո, ուրախության և տխրության, նա բյուրեղացրեց,

բարձրացրեց և որպես ազգային մեծարժեք գանձ դրեց մեր ժողովրդի հոյակապ գանձերի՝ ճարտարապետության և Սպունի էպոսի կողքին:

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 52:



Ուր որ հայ կա, աճյտեղ է և Կոմիտասի երգը: Կոմիտասը համազգային մեծություն է: Նրա երգով մեր ժողովուրդը ավելի գիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ, ինքնաճանաչեց: Հայ հասարակությունը զգաց աշխատավոր ժողովրդի վիշտն ու հրճվանքը, նրա աշխատանքի խանդը, նրա սերը դեպի իր հայրենի քնությունը:

Կոմիտասը հայ երգով լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ. նրա խեղդված վիշտը, իրավազուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը:

Կոմիտասը զոհն եղավ թուրք պետության բարբարոսության. նա տեսավ հայ ժողովրդի՝ կանանց, երեխաների, ծերերի, աշխատավորների, մտավորականների երթը դեպի մահ, դեպի գերեզման: Բոլորը, բոլորը անցան նրա մեծ, խորագգաց սրտի միջով, և նա խորտակվեց, ջախջախվեց:

Անհոնորեն մեծ է մեր վիշտը, մեր կորուստը. ինչքան գանձեր նա տարավ իր հետ...

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Երկեր: Հտ. IV, Եր., Պետհրատ, 1959, էջ 89—90:



Կոմիտասը ինձ ժամանակակից մարդ էր. տարիներով ապրել ենք Գևորգյան ճամբարանում, նույն հարկի տակ, խոսել, կատակել, ճամփորդել ենք միասին. եղել ենք Նվրոպայում, Ստամբուլում միասին: Բայց այդ թվում է ինձ ոչ իրական. իսկական Կոմիտասը ինձ համար հիմա լեգենդ է, հե-

ռավոր առասպել և նրա կյանքն ու փառապանծ դործը մի չքնաղ հրաշապատում:

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 51:



Կոմիտասը վեմն է հայ երաժշտության, հիմնաքարը: Կոմիտասը այն իմաստուն ստեղծագործողն է, որ մեծապես հասկացավ ժողովրդական աղբյուրների կենսակից ուժը և իր նյութը վերցրեց այնտեղից: Եվ այսօր Կոմիտասը այն երաժիշտը չէ, որին մենք սոսկական «արժանավորների հարկը» մատուցանելու համար միայն հարգանքի խոսք ասենք: Այսօր արդեն պարզ է ամեն երաժիշտի համար, որ մեր ժողովրդական երգի վրա հիմնվող նոր երաժշտությունը Կոմիտասից է սկսվում:

Այսպիսով Կոմիտասն այն երաժիշտը եղավ, որ իմաստնաբար և հեռատեսորեն վճռական շրջադարձով լծակը ուղղեց դեպի աշխատավոր ժողովրդի երգը իբրև մեկնակետ ապագա հայ երաժշտության:

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

Երկերի ժողովածու: Հտ. 8: Եր., Հայպետհրատ, 1963, էջ 103, 104:

Երեք տարի Կոմիտասին հետ օրուգիշեր նույն երգիկին տակ ապրելով, մոտեն ճանչցա անոր նկարագրի գծերը...

Կոմիտաս մարդկային բացառիկ առաքինություններու ծով էր: Չափազանց աշխատասեր, աննկուն կամքի տեր, անկեղծ, բարեհոգի, ընկերասեր, քաղցր և համեստ՝ ամենուն նկատմամբ: Մաքրակրոն էր ան և մեծ հայրենասեր մը: Բացի իր երաժշտական հանճարեն, քովնտի շնորհքներ ալ ուներ. բանաստեղծ էր... վերին աստիճանի սրամիտ, կենսուրախ և պատրաստաբան էր Կոմիտաս և սիրված ճամբարանի մեծ ու փոքրեն:

Իմացել եմ, որ 1906 թվին Փարիզի մեջ Կոմիտասի ցուցադրական մեկ համերգեն վերջ, ֆրանսիացի հայտնի կոմպոզիտոր-դաշնակահար Կլոդ Դեբյուսի ծոնկի գալով կհամբուրեն Կոմիտասի ձեռքերը, ըսելով՝ «Հանձարեղ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանձարին առջև կխոնարհիմ...»:

ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆ

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 75, 80:

Այս ամենը, որ գրում եմ, կարծես երազ է: Եվ ինքը Կոմիտասն էլ կարծես երազի պես անցավ, նա էլ կարծես մի երազ էր, մի հեքիաթ, որ եղել է և չի եղել, որ կա և չկա: Բայց ամեն անգամ, որ նրա ձայնագրած ու դաշնակած ժողովրդական երգերը լսում եմ, այդ անցյալն իրականություն է դառնում ինձ համար, կենդանանում է իմ աչքի առաջ նա իր ոգևորությամբ մեր ժողովրդական երգերի համար, ես զգում եմ և գիտեմ, որ նրա կատարած գործը վաղանցիկ չի լինի և երկար, շատ երկար ժամանակ նա մեր բնիկ երաժշտական հնչյուններով սիրելի կդառնա շատ սերունդների:

ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆ

«Կոմիտաս», ժողովածու: Կազմ. Ռ. Թերլեմազյան: Եր., Պետհրատ, 1930, էջ 69:

Կոմիտասը միայն հավաքող չէ. ազգագրական ժողովածուն նրան չի բավարարում և ո՛չ էլ գիտական պեղումներն են նրան հագեցնում: Նա հանդես է գալիս իբրև մի նոր, կենդանի երաժշտության հիմնադիր, հենված հենց իր հավաքած ժողովրդական երգերի վրա:

Նրա այդ մեծ ու անզուգական գործը մնում է իբրև մի մոնումենտալ գործ համամարդկային մասշտաբով...

ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Նույն տեղը, էջ 17:

Անցյալ գիշեր սրահին մեջ երգելով ու բարբառելով, զվարճաբանելով, երբեմն ալ միշտ հանկուցանելով՝ Հայաստան ուխտագնացության տարիք զմեզ. կամ լավ ևս է ըսել տան ուխտագնացության տարիք զմեզ. դուք Մաքիշ մը Հայաստան բերիք Եգիպտոսի հայերու... դուք Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս պահ մը. ո՛վ ըսավ, թե լեռները չեն քալեր...

Ի՞նչ հրաշարվեստ հուշարար մըն եք դուք նախնի ու արդի հայ գեղեցկությանը. լիահավատ սիրով, բոլորանվեր ջանքով, հետազոտեր, որոնք, ի քնար վերակոչեր եք մեր քաղցրադու, աստվածաշունչ մեղեդիներն ու օրհներգությունները, որոնց աստվածաշունչ մեղեդիները համբուրել տվիք մեզի: Հայ գեղջուկ բանաստեղծության կույս գեղեցկությունը պաշտել տվիք մեզի:

Ո՛վ վարպետ, վարդապետ, ի՞նչ բանի ավելի հիանամ ձեր մեջ, ձեր արվեստորո ձայնի՞ն, թե գերանուրբ արվեստի՞ն, պատարուն գիտության՞, թե բոցաշեշտ պերճախոսության. հրապուրիչ բանախոսի՞ն... Ձեր համերգը այգու՝ «հաւատամք» մըն է հայ ցեղին բարձրագույն ընդունելությանց ու անոր անհուն կատարելականության:

Մեզմե ո՛վ պիտի կրնա մոռնալ երբեք հայրենիքի հոգեզվարճ այն տեսարանները, զոր խոսքով ու երգով հեռապարզեցիք մեր զմայլած աչքերուն առջև, վասնզի ձեր երգը, վարպե՛տ, ներդաշնակություն մըն է կատարյալ, գույն ու պեսպիսություն ունի, խորություն ու մթնոլորտ ունի, — երկրին մթնոլորտը, — լույս ու ստվերներ ունի, Հայաստանը մեր լսելիքը... տեսանք մենք:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Նույն տեղը, էջ 100—102:



Կոմիտասն հանդիսանում է հայկական երաժշտության առաջին ուսումնասիրողը... Նրան քաջալերողը ծառայած պիտի լիներ ոչ թե նրան, այլ գեղարվեստին և ամբողջ մարդկության:

Վ. Գ. ՂՈՐՂԱՆՅԱՆ (Երաժշտագետ)
Նույն տեղը, էջ 15:



Կոմիտասի առաջին ու կարևորագույն գործը՝ հայ երաժշտական ոճը վերագրած ըլլալն է:

Կոմիտաս վարդապետ եղավ առաջին հարազատ հայագույն դաշնակողը հայ երգին, և ատիկա իր կատարած գործին երկրորդ կարևոր կետն է:

Կոմիտաս վարդապետ հայ երաժշտական ֆոլկլորի, նույնիսկ արևելյան ֆոլկլորի, բանասեր-հավաքիչ մըն ալ եղած է, բացի նոր հայ երաժշտության մը ռահվիրայի իր մեծ դերեն:

Կոմիտաս արտակարգ երգիչ էր, հայ երգին մեր օրով մեծագույն արտահայտիչը:

Կոմիտաս եղավ հայ երաժշտության մեծ պրոպագանդիստը, առաքյալը օտարներուն մոտ և հայոց խիստ համար:

Կոմիտաս եղած է խանդավառ ուսուցիչ մը և արտակարգ խումբ կազմող ու վարող մը:

Կոմիտասի ձուխ անձնավորության մեջ ամենակարևոր տեղերեն մին կբռնե գիտուն ուսումնասիրողը:

Կոմիտաս, վերջապես, ստեղծագործ երաժիշտ էր և ոչ թե միմիայն հավաքող ու դաշնակող, ինչպես ոմանք կլրարծեն:

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ
«Անահիտ», Փարիզ, 1931, թիվ 1—2, էջ 104—111:

Մի այցելություն հիվանդ Կոմիտասին

1921 թ. մարտին, մի առավոտ ուղեցի Կոմիտասի հետ անցկացնել: Ծառայողի հետ միասին իր սենյակը մտա: Պառկած էր. վեր ցատկեց, ես էլ իր վզին ընկա և սկսեցի համբուրել իրեն: Նա երեսներս բռնեց, և փաղաքշական ապտակներ տալով ասաց. «Արի քեզ ծեծեմ»: Հետո «նստիր» ասաց. ու ինքն իր առողջ ու աշխուժ մարմնով ոտքի մնաց և սկսեցինք խոսել:

— Կոմիտաս, — ասացի, — գիտեմ, չափազանց վշտացած ես մարդկանցից, իրավունք ունես, ես էլ եմ վշտացած, սակայն չի կարելի հավիտենապես խռովել. մենք բոլորս անհամբեր քեզ ենք սպասում:

Սակայն նա բառերի ստուգաբանություն և փիլիսոփայություն էր անում: Հետզհետե ավելի լրջացավ: Նկարչության մասին հետևյալն ասաց. «Պետք չէ: Հարկավոր է միայն լույս և բնություն»:

Առաջարկեցի միասին Սևան գնալ:

— Ի՞նչ անեմ այնտեղ, — ասաց: Էջմիածնի մասին էլ անտարբեր մնաց:

— Գնանք դուրս ման գանք, — ասացի:

— Այստեղ շատ լավ է, — ասաց: Կյանքի և մահվան մասին խոսելիս ասաց, որ մահը գոյություն չունի և իսկույն սենյակի դուռը բանալով ասաց. «Սա գերեզման չէ, ապա ի՞նչ է»: Կոմիտասին հանգստացնելով ասացի. «Գնամ, չձանձրացնեմ»:

«Զէ, եկել ես, նստիր, էլ ո՛ւր ես գնում»:

...Խոսեցի իր աշակերտների մասին, ուրախացավ, որ եկել են Փարիզ սովորելու:

Հարցրի հա՞յ երաժշտությունն է լավ, թե՞ եվրոպականը: — «Եղբայր, (բարկացած) դուն ուզում ես ծիրանից դեղձի հա՞մ առնել, նա իր տեղն ունի, մյուսը՝ իր»:

Հարցրի. «Կերգե՞ս»: «Այո» ասաց: «Դե, Կոմիտաս ջան,

մի բան երգիր ինձ համար»: «Չէ, հիմա ես ինձ համար եմ երգում և այն էլ շատ կամաց»:

Մի կես ժամ էլ դեսից-դենից խոսելուց հետո հանկարծ խռովեց, դուռը բաց արավ ու գնաց երեսը կպցրեց պատուհանի ապակուն և էլ չխոսեց: Հագնվեցի, մնաս բարև ասացի և առանց պատասխան ստանալու դուրս եկա:

1928 թվին, երբ Հայաստան էի վերադառնում, մի անգամ ևս այցելեցի Կոմիտասին: Հիվանդանոցի այգում պառկած մտածում էր:

Մազերը բոլորովին սպիտակել էին: Մոտեցա և կես ժամ զանազան հարցեր տվի, սակայն իմ ոչ մի հարցին չպատասխանեց:

Այդպես էլ բաժանվեցի նրանից:

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵՋՅԱՆ
«Կոմիտաս», ժողովածու, էջ 91:

Ըլլա կրոնական, ըլլա ժողովրդական, արվեստագետ վարդապետին երաժշտությունը տակնուվրա կրնն մեր սրտերը, անոր մեջ այնպիսի պարզ, հոգեբուխ, անուշ, գգվող բան մը կա, այնքան լավ կպատկերացնե անմեղ, միամիտ հոգիներու վճիտ զգացումները: Գյուղական աղվոր տեսարանները այնքան հեշտիվ իր ներդաշնակ թևերուն վրա կառնե, կտանի զմեզ դեպի գեղազվարճ սարերը, դեպի կանաչորակ ձորերը, դեպի թափ անտառները, դեպի շեն այգեստանները մեր հայրենի երկրին, որ իսկույն կզգանք թե մերն է ան, մինչև ամենադուրջն նոթերը, տերն է այդ երաժշտությունը, կարծես մեր մայրերը մեր օրորոցունքով երգած են այդ օրորերգները, կարծես մեր երիտասարդության տարիներուն մեջ լսած ենք այդ բուն տրտունջները տառապող սրտերուն:

Կոմիտաս վրդ. չնաշխարհիկ տաղանդը ունի գեղարվեստն իր բարձրագույն մակարդակին հասցնելու, իր հոգին ներդաշ-

նակության հետ կապված է այնպես, ինչպես աշխարհի վրա քիչ անգամ կպատահի, իր երաժշտությամբ մարդկային ամենագոյություն և ամենավսեմ զգացումները բացատրելու հազվագյուտ ձիրքն ունի, իր խաղը հրեշտակային և գերագույն մեղամաղձության մը դրոշմը կկրե. ամենեն զարգացած են ամենեն ռամիկը կզգացվի լսելով իր համերգները, որոնք հիանալի են և իր մեներգներն, որոնք զմայլելի են:

ԱՆԱՅԻՍ

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 22:

Սիրելի լինելը դժվար բան է. դու կարող ես հայտնի դառնալ, անուն հանել, բայց շունենալ սիրված անուն. ինչու է այդպես — չգիտեմ. թերևս դա ունի իր գաղտնիքը: Այսօր քանի պարզ է սակայն, որ լայն ժողովրդականություն վայելում են միայն սիրված անունները, իր խոշոր գործերի մեջ միշտ համեստ, բարեհամբույր և ոչ իբեմ ցուցադրող, այլ անձն իր աշխատանքների ծալքերում թաքցնող հեղինակները:

Այդպես էր Կոմիտասը:

Տեսե՛լ եք նրան իր կյանքի ու գործի մեջ, լսե՛լ եք դուք երբևէ նրա երգեցիկ խմբի համերգը կամ իր՝ մեծ վարպետի մեներգը՝ «Մոկաց Միրզեն», «Սիրտս նման էր» և նման ժողովրդական սքանչելի ստեղծագործությունների կատարումը — երկարաշունչ, թախծալի, բայց և թուփշ, և հոգեզմայլ: Ով էլ որ լինեիր դու, չէիր կարող գոնե առժամ չկտրվել քո առօրյայից ու հոգով ու սրտով չտեղափոխվել այնտեղ, ուր երկրագործ աշխատավորի հանճարն է երկնել այդ երգերը, ուր բախտից հալածված դարիբն է շարքաշ իր օրը սգացել և կամ «տառապյալ գեղջուկն» է իր հոգն ու վիշտը հառաչել արորին ու դուժանին կռթնած:

Միջահասակ, նիհար, ջղուտ և զգայուն, դեմքը դեղնավուն, աչքերը արտահայտիչ և վառվռուն, գլուխը ճաղատ, մորուքը

ուչ «վարդապետավայել», այլ ծնոտի տակ միայն թողած, այսպես կոչված վազներյան, ինքը արագաքայլ և անհամբեր, միշտ շտապող, միշտ աշխատասեր, կյանքից գոհ, լավատես:

Այդպես էր Կոմիտասը... Չնայելով, որ նրա սենյակը զարդարուն էր գորգերով ու նկարներով, բայց ինքն՝ արվեստագետն ապրում էր, կարելի է ասել, սպարտական կյանքով, ուտելու մեջ պարզ և չափավոր, չէր խմում ու չէր ծխում, քնում էր դարուն թե՛ ձմեռ բաց պատուհանով և, որ գլխավորն էր, պառկում էր ուղղակի հատակի վրա, առանց ներքնակի ու բարձի: Նոտագրության մեջ մաքրասեր էր, գրում էր գեղեցիկ, իր իսկ տողած թղթերի վրա, այնպես, որ նրա ձեռագրերից կարելի էր ուղղակի կլիշե պատրաստել:

Գ. ԼԵՎՈՆՅԱՆ

«Կոմիտաս», ժողովածու, էջ 76:



Ժողովրդին ձայնը կխոսի իր մեջ, կամ ինչպես կսիրե ըսել բանաստեղծը. «Դարերու անհուններեն ցեղին հոգին է, որ կխլտի, կարթնա իր մեջ»: Եվ իբրև նոր օրերու Մեսրոպ Մաշտոց մը, ա՛յնպես ինչպես անոր երկունքը եղավ հայ գրերու հրաշափառ գյուտին առթիվ, նույնպես Կոմիտաս, հայ ձայներու դաշնակությանց բանալին գտնելու իր տափնապնդումն մեջ կապրի իր բուն երկունքը, լեցո՛ւն տանջալից ու անքուն գիշերներու անգոհանքներով, վերասլաց տեսիլքներու և հափշտակություններու ալեկոծություններով, ինքնամոռաց կենտրոնացումի մը մեջ խորասուլյզ, զիմազրավելով հոգեկան ահավոր փոթորիկ մը, որմե դուրս կուգա վերջապես խաղաղած, հանդարտած և կարծես սրբացած:

Կոմիտասը եկավ սիրեցնել մեզ, ինչ որ մերն էր, բացավ մեր վարագուրված աչքերը մեր սեփական արժեքներուն:

ԱՆՏՈՒՆԻ ԱՄԵՆՈՒ

Largo (ad libitum) 4-4

առջև, վերադարձուց մեզի դեպի մեր հայրենի բնագավառն ու
օջախը, մեր անդն ու անդաստանը բառին առարկայական թե
այլաբանական իմաստով:

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կոմիտասի աշակերտներից: Նույն տեղում, էջ
175, 179:

Պետք է ասեմ, որ ճեմարանի ամբողջ աշակերտությունը
սրտանց սիրում էր պարզ ու կենսուրախ Կոմիտասին և լիովին
վայելում էր նրա ջերմ սերն ու ընկերական վերաբերմունքը,
գիշերօթիկ սաների հատուկ խանդավառությունը համախմբե-
վելով նրա շուրջը և լսելով նրա մտերմական կատակներն ու
սրախոսությունները:

Վ. ՏԵՐ-ԱՌԱՔԵԼՅԱՆ

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին»: էջ 181:

Ու մեր զմայլած հոգիներուն առջևեն, ավելին՝ խորեն ան-
ցուց Կոմիտասը, շարան-շարան այդ երգերը, որոնց մեջ բո-
վանդակ կյանք է հայ ժողովուրդին, ուրախությամբ աշխա-
տող, զմայլագին երազող, մաքրորեն ու խորագին սիրող,
անուշ թախծությամբ մի կարոտցող, դյուցազնող հայ ժողո-
վուրդին. աշխատանքի արի ցնծերգները, լուսնալուսային
պարերգներն ու հարսներգները, միևնույն աստեն զգաստ ու
խռովիչ այն սիրերգները, անհուն ու խոր կարոտերգներն ու
ողբերգները, գեղահնչյուն շարականները: Բովանդակ կյանքը
հայ ժողովուրդին՝ երաժշտացած, ու այս անգամ Կոմիտասի
արվեստին մեջ վերստեղծված, պայծառակերպված, պայծա-
ռաձայնված...

Շ. ԲԵՐԲԵՐՅԱՆ

Նույն տեղը, էջ 94.

Կոմիտասի տաղանդն ու նուրբ երաժշտական զգացմունքն
արտահայտվում էր նրա բոլոր աշխատությունների մեջ: Բայց
պետք է շեշտել, որ նրա աշխատությունների կենտրոնը իր
ձայնագրած և բաղմաձայն ժողովրդական երգերի մեջ արտա-
հայտվող պոլիֆոնիկ ձևն է, որն առանձին գույն ու թափ է
տալիս նրա գրվածքներին:

ՆԻԿ. ՏԻԳՐԱՆՅԱՆ

«Կոմիտաս» ժողովածու, Եր., 1930, էջ 90:

Կոմիտասի ներդաշնակած երգերի գեղարվեստական նվա-
ճումներից մեկն էլ այն էր, որ այս երգերում հանդես են
գալիս երանգների արտացոլում, ուրիշների կենդանի գույներ
և կոնտրաստներ: Կոմիտասն արևելյան մեղկ եղանակներին
հակադրում էր հզոր գծերով, ջղուտ ու առնական շնչով գր-
ված ներդաշնակումներ:

Ռ. ԹԵՐԼԵՄԵՋՅԱՆ

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 165:

Կոմիտասի հետ երկրորդ անգամ հանդիպեցի 1908 թվին
Բաքվում:

Բաքվի համերգների ծրագիրը ցույց տվեց, որ նա վերջ-
նականապես իրեն նվիրել էր ժողովրդական երգի ուսումնա-
սիրությանն ու զտել այն անհարազատ տարրերից: Այդ երկու
համերգներին էլ, բացի հայ հասարակությունից, ներկա էին
բավական եվրոպացիներ, որոնք մեծ հիացմունքով թողին
դահլիճը:

ՍՏ. ԴԵՄՈՒՐՅԱՆ

Նույն տեղում, էջ 169:



Եթե ուղեխնդր մեր արվեստի մշակներուն շքախումբը նմանեցնել համաստեղութեան մը, պիտի կրնայինք ըսել, որ մեր երկնակամարին վրա Կոմիտաս մեկն է ամենեն շքնաղ ու ամենեն աղամանդային փայլով շողացող աստղերէն: Մեկն է մեր այն փառքերէն, որոնք իրենց գործին մեծութիւնովն ու տարողութիւնովը, իրենց մատուցած մեծ ծառայութիւնովը ամբողջ ազգին մշտական երախտիքին են արժանացած:



1907 թվականէն Կոմիտասը արդեն Եվրոպայի կենտրոնական քաղաքներուն մէջ (Փարիզ, Բեռլին, Լայպցիգ, Ժնև Բրյուսել) հանրածանոթ երաժշտագետ էր դարձեր, շնորհիւ հայ ժողովրդական երգերուն նվիրված իր բաղմամբիւ համերգներուն և դասախոսութիւններուն, որոնց բացառիկ երաժշտական արժեքը օտար մամուլի էջերով կհասնին մեզի մինչև Լոնդոն...

Մեծ երաժշտագետը մեր սրտին և հոգւոյն մէջ, բացի հայ տոհմիկ երաժշտութեան սերն ու ճաշակը ներարկելէ, երբեք չէր մերժեր երգելու Շուքերտի սերենատը գերմաներէն բառերով, Մասնէի ումանսը ֆրանսերէնով, Մոցարտի «Ալեյուպան», Գունոյի և Տիգրան Չուխաջյանի «Ալև Մարիա»-ները իտալերէնով:

Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆ

Նույն տեղում, էջ 228—234:



Նա առաջին մեծ ստեղծագործողն եղավ մեր ժողովրդական ու հոգևոր երաժշտութեան: Այդ գերմարդկային աշխատութեանը քայքայեց մեր հայրենիքի ջրվեժներին նման վիթ-

արի այդ ֆիզիկական ու հոգեկան ուժը. աքսորի հրեշային դեպիւնները ընդմիշտ խորթակեցին այդ աննման, բարձր ու յուրը էակի հոգին և հայոց նորաբողբոջ գեղարվեստի լուսաւոր աստղը խավարեց հավիտյան:

Մ. ԲԱԲԱՅԱՆ

(Կոմիտասի աշակերտահմեմից)

Նույն տեղում, էջ 129:



Առաջին խոսքերս Կոմիտասի մասին շքմեղանքի բառեր պիտի լինեն: Մեծ ամոթով խոստովանում եմ... ծանոթ չէի նրա երկերի հետ... Ի՞նչ երգահան և ի՞նչ արտակարգ հայտնութիւն էր նա:

...Ես հավատում եմ հայ երաժշտութեան ապագային, որովհետեւ մի ազգ, որ ստեղծած է հայ երգը... մի ժողովուրդ, որ երաժշտական անցյալ է ունեցած, ապագայում աշխարհին պիտի ընծայե մի շարք մեծ անուններ: Այդ անունների մեջ առաջինը կլինի Կոմիտաս Վարդապետի անունը:

Ամենից առաջ նրա մեջ տեսնում ենք ամենահեռանդուն երաժշտական ազգագրագետին, որ շնայած աղքատիկ միջոցներին, առանց որեւէ օգնութեան, հնար գտավ մինչև 3000 երգ գրի առնել:

Երկրորդ՝ դա բարձր երաժշտական գիտնականն է:

Երրորդ — նա ամենահեռանդուն երաժշտական գործիչն է և իր անխոնջ քարոզչութեամբ, երգով, խոսքով և նվագով նա իսկական հայ երգը ներկայացնում է թե՛ իր ազգին, և թե՛ Արեւմուտքին:

Վերջապես՝ չորրորդ — նա հեղինակ է հայկական երգերի մշակման և ներկայացնում է իբրեւ երգահան: Հարց է ծագում

մեր առաջ, թե այդ գործունեության ծանրության կենտրոնը ո՞րտեղ է:

Գերազանցորեն նա գործիչ է, ազգագրագետ, գիտնական, թե՛ երգահան: Չնայած, որ Կոմիտասը երևան է եկել իբրև հեղինակ հայկական երգերի մշակումների, ես պնդում եմ, որ նախ և առաջ նա երգահան է: Նրա ճանապարհը միակ ճիշտ ուղին է, որ պիտի ընտրեր այդ մարդը, որ հսկայական նպատակ ուներ — գտնել այն ներդաշնակային և ձայն առ ձայն ոճը, որ իրենց էությանմբ իսկական հայ ժողովրդական երգին համապատասխան են: ...Հանձարեղ Կոմիտասը գործադրեց այդ ոճը և այնպիսի կատարելությամբ, որ հազիվ իր արևմտյան արվեստակիցներից մինը կարողանար իրագործել: Նրա մշակումների, ավելի ճիշտ կլինի ասել, նրա քանքարով խմբական երգերի մեջ՝ ժողովրդական եղանակը պահված է հոռու անձեռնմխելի՝ թե՛ շափի, թե՛ եղանակի տեսակետից: Նա ֆանատիկոս էր այդ հարցում: Ո՞վ նրանից լավ կարող էր պաշտպանել ժողովրդական երգի հոգին:

ԹՈՄԱՍ ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎԻՉ ՀԱՐԹՄԱՆ

ռուս երգահան

«Անահիտ», 1935, № 1—2, էջ 76:



Այդ համեստ և նուրբ անձի հետ ծանոթացաւ Փարիզում 1906 թ. և հպարտ եմ նրա բարեկամությունը վայելած լինելու համար: Նորից հանդիպեցի նրան 1914 թ., երբ նա եկավ իր Փարիզ Համաշխարհային Երաժշտական Համագումարի մասնակցելու համար: Անհունորեն երջանիկ էի համարյա ամեն օր նրան հանդիպելու հայտնի երգչուհի օր. Մ. Բաբայանի տանը, որ հայ երաժշտության անխոնջ մշակողն ու տարածողն է Արևմուտքում: Շնորհիվ հայր Կոմիտասի, օր. Մ. Բաբայանի և նրա երկու աշակերտների՝ պ. պ. Մուղունյանի և Շահ-Մուրադյանի՝ հայ երաժշտությունը անասելի ընդունելություն գտավ համագումարում:

Դրան մեծապես նպաստեցին Կլոդ Դեբյուսին, մեծահայտի Ռոմեն Ռոլանը, անմահ երաժշտագրական վեպի՝ «Ժան Դրիստոֆ»-ի հեղինակը, Լուի Լալուան — մեծարժեք քննադատը և Դեբյուսիի կենսագրողը և ուրիշ շատ անվանի ֆրանսիացի երաժիշտներ և երաժշտագետներ:

Այս եղավ 1914 թ. հունիս—հուլիս ամիսներին: Հայր Կոմիտասը գրավել էր ամբողջ համագումարի ուշադրությունը սար դասախոսություններով հայ երաժշտության մասին, ներառյալ այնքանով նրա ծագումը, նրա տեսական ձայն առ ձայն առձին բեղմնավորումը, որ նա գրել էր հին հայկական նոտաբեմբի գրության մեջ և իր երգահանդեսներով:

Փարիզի ժամանակակից երաժշտական կյանքի մեջ նրա հաջողությունը ամենացայտունը եղավ: Այդ օրերի թերթերը և ամսագրերը, թե՛ Ֆրանսիայի, և թե՛ օտար երկրների, վկայ են նրա աննախընթաց հաջողություններին:

Համեստ Կոմիտաս Վարդապետը հրճվում էր ոչ այնքան իր հաջողության, այլ հայ երաժշտության փառաբանության համար: Նա խորին գոհունակությամբ տեսնում էր, որ իր տոհմիկ երաժշտությունը՝ իր նվիրական երջանկությունը, ամբողջ համագումարի համակրությունը և սերն էր զարթեցրել:

Թ. ՀԱՐԹՄԱՆ

«Անահիտ», 1935, № 1—2, էջ 78:



Հայ ժողովրդական երգը հանձին Կոմիտասի գտել է իր ամենացայտուն վարպետին: Նա ուսանելի է շատ տեսակետից: Եվ հայ երաժշտության զարգացման նախանձախնդիր ամեն ոք, նախ պետք է լիովին ուսումնասիրի և հասկանա Կոմիտասին և ապա միայն սկսի ստեղծագործել:

պրոֆ. ՀԱՐԹՄԱՆ

«Կոմիտաս»: Ժողովածու: էջ 45:



Ես զարմանում եմ, որ 25 տարի սրանից առաջ փոքրիկ Հայաստանը տվել է մի Կոմիտաս, որի ստեղծագործություններն իրենց գեղարվեստական կառուցվածքի և արժեքի տեսակետից հազիվ կարելի կլինեին սպասել Ռուսաստանի խոշոր կենտրոններում ապրող նույն ժամանակի ամենահայտնի ռուս կոմպոզիտորներից:

ԳՆԵՍՒՆ

Ռուս խոշոր կոմպոզիտոր

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին»: էջ 159:



...Փարիզում կազմակերպվել էր «Կովկասի չքավոր ուսանողներին օգնող Կովկասյան Ընկերություն»:

Կովկասյան Ընկերությունը ղեկավարում էր վարչությունը, որի կազմի մեջ մտնում էին... վարչության մյուս անդամներին չեմ հիշում, սակայն գիտեմ, որ կոմպոզիտոր Կոմիտասն ու Ռոմեն Ռոլանը պատվավոր անդամներ էին:

Ինձ հայտնի չէր, Վրաստանում եղև՞ էր Կոմիտասը, թե ոչ, լսե՞լ էր նա վրացական ժողովրդական երգեր, բայց ես տեսնում էի, որ նա շատ լավ էր հասկանում և ղգում մեր երաժշտությունը, թեպետ սկզբում, երևի իրեն հատուկ համեստությունից, հայտնեց, թե մեր ժողովրդական երգի հետ քիչ է ծանոթ:

ՄԻՔԱՅԵԼ ՔՈՐԵԼԻ (վրացի երաժիշտ)

Նույն տեղում, էջ 198, 206:



Երգի համաշխարհային տիտան է Կոմիտասը, բաղմակողմանի երաժիշտ ու զիտնական, այն բացառիկ դեմքերից, 92

որոնք էական դեր են կատարում իրենց ժողովրդի հոգևոր կյանքում: Խոսքերով չի կարելի գնահատել այն, ինչ նա արեց հայ ժողովրդի համար...

Նրա կյանքը ողբերգական եղավ, բայց հակառակ դրան՝ նա հասցրեց անել գործեր, ստեղծել երկեր, որոնք ոչ թե պարզապես կարևոր նշանակություն ունեցան, այլ եղան ամուր հիմնաքար: Այսօր մենք առիթ ունեցանք լսելու նրա խմբերգերը, որոնք ցնցեցին մեզ: Դրանք այնպիսի անստգուտ գոհարներ են, վարպետության այնպիսի փայլով գրված, ունեն այնպիսի ազգային բուրմունք և մարդկային խորություն, որ կարող են ավետարան լինել ոչ միայն հայ, այլև բոլոր ազգերի երաժիշտների ու երաժշտասերների համար: Եթե այսօր Կոմիտասը տեսներ, թե ինչպիսի փայլուն հաջողությունների է հասել հայ երաժշտությունը, ինչպիսի համընդհանուր ճանաչում են գտել հայ կոմպոզիտորները, գոհունակությամբ կարող էր ասել, որ իզուր չեն անցել իր կյանքը, իր երազանքներն ու տառապանքը: Կոմիտասի գործն անմահ է ոչ միայն նրա անկրկնելի երգերով, այլև իր սքանչելի արդյունքով, որ ժամանակակից հայ երաժշտությունն է: Եվ այսօր մենք հարգանքով ու սիրով, մեր ամբողջ երկրի երաժշտական մշակույթի կողմից, խոնարհում ենք մեր զուխները Կոմիտասի աճյունի առաջ:

ՏԻԽՈՆ ԽՐԵՆՆԻԿՈՎ

Ռուս կոմպոզիտոր: Սովետական կոմպոզիտորների միության քարտուղար: «Սովետական արվեստ», 1965, № 7, էջ 37:



Կոմիտասը պատկանում է այն հանճարների համաստեղությանը, որոնք այնքան էլ հաճախ չեն ծնվում, բայց ծնվելով՝ վառ աստղի պես լուսավորում են մշակույթի անսահման հորիզոնները:

խորապես համոզված եմ, որ ծանոթացումը Կոմիտասի ստեղծագործությունները, մեզ կօգնի՝ Ղազախաստանում լուծելու մեր ազգային երաժշտության ուսումնասիրման կարևոր պրոբլեմները:

ԻԼՅԱՍ ՕՄԱՐՈՎ

Ղազախական ՍՍՀ կուլտուրայի մինիստր
«Սովետական Հայաստան», 1968, էջ 224:

Ոչ ոք ինձ չի կարող մեղադրել շափազանցության մեջ, եթե ես ասեմ, որ այդ համերգը (1906 թ. Փարիզ) մի հեղաշրջում էր և իր հայտնությունը զարմացրեց մեզ: Ներկա եղողներից ոչ ոք, ի քացառյալ նուրբ գիտականերից, իրեն պատկերացնել չի կարող այդ արվեստի գեղեցկությունը, որն ըստ էության ոչ եվրոպական է, ոչ արևելյան, բայց եզակի է իր տեսակի մեջ: Սքանչելի քաղցրահնչուն, խորապես հուզական, շափավոր քնքուշ այդ մեղեդիները նրբակերտ են ու ավարտված: Ճկուն ու կենդանի ութմերի առատությամբ հարուստ երաժշտություն է դա՝ կարծեք հենց սրտի խորքից հոսելիս լինի, որպես սառնորակ, վճիտ, արևաշող հոսանք: Նրա մեջ փայլատակում է արեգակը, տակայն ոչ Արաբիայի և Պարսկաստանի կիզող արեգակը, ավելի շուտ երկնային ոսկեփայլ լույս է, որի ջերմությունը փայփայում, փաղաքշում է ձյունածածկ լեռների գագաթը, անտառների կանաչը, առվակների խոխոջը: Մարդկային հոգուն՝ վիճակվել է իր ընդերքում պահպանելու այդ ժպտադեմ երկրի (ժողովրդի) հարազատ հողի մաքրությունը, նրա սերն ու հավատը դեպի լուսավորը, դեպի կյանքը: Այդ պարզության անգնահատելի գանձարանը... հոսել է մեզ անձեռնմխելի հիասքանչ երգի ձևով՝ որպես հոտավետ պայծառ ծաղիկներ:

ԼՈՒԻ ԼԱԼՈՒՍ.

Ֆրանսիացի նշանավոր երաժշտական ֆենադատ:

Սորբոնի համալսարանի պրոֆեսոր

Տե՛ս Ս. Գասպարյան «Կոմիտաս» գրքում: Եր., Հայպետհրատ, 1961, էջ 189:

1914 թ. Փարիզի երաժշտական կոնգրեսում, ուր հավաքվել էին աշխարհի գլխավոր երաժշտագետները, Կոմիտասը հայ ժողովրդական ու հոգևոր երգերից մի համերգ տվեց՝ հիացնելով ներկա եղող կոմպոզիտորներին:

Ժողովրդական երաժշտությունը, ինչպես և արորի, խոփի, գութանի երգերի մասին տված նրա դասախոսությունները, պիտի ասել, համագումարի նիստերից ամենից թանկագինը եղան:

Երբ Կոմիտասը դաշնամուրի մոտ նստեց մեղմորեն երգելու հայկական երգ, ունկնդիր հասարակությունը քարացած մնացել էր լուռ, և այնտեղ տիրեց այն վեհապանծ հմայքը, այն գերագույն պարզությունը, որ բխում է հայկական երաժշտությունից:

ՖԻՆԴԵՐԻԿ ՄԱԿԼԵՐ

Սորբոնի համալսարանի պրոֆեսոր
«Կոմիտաս», ժողովածու, էջ 44:

Ես երաժշտական անալիզի եմ ենթարկել Կոմիտասի ստեղծագործությունները և եկել եմ այն եզրակացության, որ Կոմիտասը հռչակավոր արվեստագետ է: Ոչ միայն հայերը, այլ ողջ երաժշտական աշխարհը կարող է հպարտությանմբ արտասանել այդ անունը:

Պրոֆ. ԼԱՍ

Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտոնին», այդ էլ բավական կլիներ նրան խոշոր արվեստագետ համարելու:

Կոմպոզիտոր ԴԵՐՅՈՒՍԻ

Տե՛ս Ս. Գասպարյան: «Կոմիտաս» գրքում, էջ 105:

95

1899 թ. Բեռլինի միջազգային ընկերության սրահում, Կոմիտասի կարգացած դասախոսությունը հայ հոգևոր և բարձրագույն կրթական երաժշտության մասին պիտի մնա անմոռանալի: Առաջին անգամն է, որ Բեռլինում այդպիսի մի դասախոսություն է կարգացվում և գուցե մինչև այժմ Փարիզի աշխարհահանդեսում անգամ այսպիսի դասախոսություն չի կարգացվել:

Պրոֆ. Օսկար Ֆլեշեր

«Անահիտ», Փարիզ, 1931, № 1—2, էջ 116:

...Կոմիտասը աննման վարպետ է. նրա դաշնակումը աներևակայելի դժվար ու գունավոր է. նրա մեներգի ու խմբերգերի շարահյուսումները անկարելի է գերազանցել:

ԱԼՈՒՍ ՄԵԼԻՇԱՐ

Գերմ. երաժշտագետ, խմբավար
նույն տեղում:

Չարմանում եմ Կոմիտասի արտակարգ ընդունակությունն ինքնի վրա: Շատ լավ իմանալով ժողովրդական երգը, նա «այդ երգերը ներդաշնակել է հաղվագյուտ ճաշակով և ճշգրտորեն: Բոլոր այն երգերը, որոնք ես անձամբ եմ լսել Կոմիտասից և կամ ուսումնասիրել եմ, ամենից առաջ ապացուցում են, թե Կոմիտասը եզակի մի դեմք է որպես ներդաշնակող և որպես պոլիֆոնիստ:

ՎԵԼԵՇ ԵԳՈՆ

Վիեննայի համալսարանի դասախոս
«Անահիտ», Փարիզ, 1931, № 1—2, էջ 116:

Մարդ ցավով է բաժանվում այս տետրերից՝ առանց հիշատակած լինելու նրանց մեջ գտնվող բոլոր երգերը, որ արժանի են հիշատակվելու:

ՌՆԵ ԼՆՈՐՄԱՆ

Ֆրանս. հայտնի երաժիշտ

«Անահիտ», Փարիզ, 1934, № 4, էջ 126:

Արտասահմանյան մամուլի արձագանքներից

Անցյալ երեկո Ալհամայրայի բեմի վրա հայ ժողովրդի հոգին էր, որ ամբողջովին թրթռաց. մի հոգի, որն համակեղան է, որին ոչ մի ուժ չի կարող բանտել կամ մարել: Գիշերային սարսուռի մեջ ներդաշնակ խոսքեր, ժողովրդի զգացմունքներովն արյունած ու շառագույն՝ իջնում են խաղառ խաղ, մի ժողովրդի, որն իր հպարտությունը պահում էր և իր փոքրիկ համայնքից իսկ ճոխություններ էր պարգևում մարդկությանը:

«ԼԱ ԲՈՒՐՍ ԷժԻՊՏԻԵՆՆԵ»

Կոմիտասը միջազգային երաժշտության ամենից համբավվող վարպետն է:

«ԼԵ ՆՈՒՎԵԼ»

Երբ հույն ժողովրդի մեջ աստված հարուցանելու է մի Կոմիտաս, որը հին հելլենական երաժշտությունը փրկել կորստից:

«ՏԵԼԵԳՐԱՖՈՍ»



Ուրբաթ օրվան երեկոյթը հայտնութիւն մը և դժուարներ մը եղավ: Հայ երաժշտութիւնը ոչ միայն մարդկային երաժշտութեան մեկ որոշ տարրն է, այլև այնքան գեղեցիկ է ան որ կրնա նախանձը շարժել փարթամ Գերմանիային ու խորոխտ Ֆրանսիային, ան կրնա մեզի համար առաջնորդ մը ու իղեալ մը հանդիսանալ:

...Այդպիսի գործերու երաժշտական ընթերցումը քաղականաշափ որոշ գաղափար մը չի կրնար տալ անոնց մասին, պետք է զանոնք լսել հայր Կոմիտասի պես արվեստագետն մը արտահայտված, որ զանոնք կերպե՝ դաշնակի վրա ինքն իսկ իրեն ընկերանալով:

Հաճույք մըն էր տեսնել այն հրճվանքը, որով հասարակութիւնը կհետեւեր այդ երգեցողութեանց քմահաճ թելին և սրտաբուխ խանդավառութիւնը, որով զանոնք կծափահարեր: Այդ երգերեն ամեն մեկը իր հատուկ գեղեցկութիւնն ուներ: Եվ արդեն հայ արվեստին բնորոշ գծերն մին այն է, որ իր ալլազանութիւնը կհավասարի իր գեղեցկութեան:

Ահա թե ինչպիսի երգերով Հայերը կլեցնեն իրենց կյանքն ու իրենց երգերը:

«ԳԱՋԵԹ ԴԸ ԼՈՋԱՆ»

«Անահիտ», 1931, № 1—2, էջ 115:



Ու ինձ թվում է, թե նորից ահա իմ առջև տեսնում եմ Կոմիտասին, այդ միախառնումը քահանայական վեհութեան, աշխարհիկ ձկունութեան և մանկական բարութեան: Տեսնում եմ իրեն, որ երկու ձեռքերն ինձ երկարած ապում է իմ մայրենի լեզվով՝ «Եկե՛ք, եկե՛ք մեզ հետ հոգալուստը տոնելու»: Ո՞վ պիտի կարենար դիմանալ այդ ձայնի շեշտին և այդ աչքերի փայլին: Եկանք այստեղ ու լսեցինք հայ եկեղեցական երաժշտութիւնը, ինչպես որ նա իրականացնում



«Դու՛ մեր երգի Մեսրոպ Մաշտոց...»

գործ Ս. Գալստյանի

էր այն իր հետևորդների հետ: Ով որ այդ արարողութեանը ներկա է եղել, երբեք չպիտի կարողանա այն մոռանալ:

Եթե մինչև այն ժամանակը միայն մի քանի մասնագետներ էին սքանչացած Կոմիտաս վարդապետի վրա, այդ օրից հետո միջազգային երաժշտութիւնն է, որ մոտիկից հետևեց նրա աշխատութեանը, որ նրա եռանդը իրեն օրինակ առավ և որ այն երբեք չպիտի մոռացվի:

«ԱՊԱԳԱ»

(Պրոֆ. Կուրտ Սաքսի, Կոմիտասի հուշարկավորութեանը արտասանած ճառից):

«Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 128:

Կոմիտաս վարդապետը իրեն հայտնաբերեց իբրև թանկագին ծառայողը մի դատի, որն արժանի էր նման մի անձնավորության. խիստ ազդեցիկ է գեղեցկությունը բոլոր այդ հայկական մեղեդիների, որոնք, նրա շնորհիվ մտնում են արվեստագետների ռեպերտուարի մեջ՝ միաժամանակ և ճախացնելով մեր ծանոթությունը Արևելքի ֆոլկլորի մասին:

«ԳԻԴ ՄՅՈՒՋԻՔԱԼ»
Բրյուսել, նույն տեղում, էջ 16:

Հարկավոր կլինե՞ր Բուրգո Դիկուդրեի լեզուն, որ հնարավոր լինե՞ր տալ մի գաղափար ժողովրդական և եկեղեցական երգերի մասին, որ հայր Կոմիտասը բերել է մեզ Հայաստանից:

«ԼԸ ՄԵՐԿՅՈՒՐ ՄՅՈՒՋԻՔԱԼ»
Փարիզ, 1906:

Ի՞ր երկու համերգներով Կոմիտաս վարդապետը մեզ ներկայացրեց մեղեդիների մի շահեկան շարք, ուր ըմբռնեցինք բնավայրի համը և զմայլվեցինք ներդաշնակության վրա, որ նույն ինքն Կոմիտաս վարդապետի բարձր հմտության ու հանճարի գործն է:

«ՕՐՕՐ»
ՊՈԼ-ԿԻՈ
Նույն տեղում, էջ 16:

ԿՈՄԻՏԱՍԻ ԳՐԻ ԱՌԱՇ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿԱՇ ԵՐԳԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային օրհներգ: (Ամեն հայի սրտից բխած: Երաժշտություն Սողոմոն Սողոմոնյանի, ուսանող Ա. լսարանի ձեմարանի Մայր Աթոռ Ս. էջմիածնի, քառաձայն խառն խմբի համար հայկական նոտագրությամբ), խոսքերը գրեց Արշակ Թաշչյան, ուսանող Գ. լսարանի ձեմարանի Մայր Աթոռ Ս. էջմիածնի: (Վաղարշապատ, 1891. 1 էջ):

Շառ Ակնա ժողովրդական երգերի, ձայնագրեց Կոմիտաս վարդապետ: (Մեներգ հայկական ձայնախելերով (նոտաներով)): Վաղարշապատ, 1895, տպ. Մայր Աթոռ Ս. էջմիածնի, 16 էջ: Հովսեփ Ճանիկյանի «Հնությունք Ակնա» գրքում, Թիֆլիս, 1895:

Լոռեցիների գութանի հորովել: Ձայնագրեց և դաշնակեց (քառաձայն խմբի համար) Կոմիտաս վարդապետ: «Գեղարվեստական արթում, Կ. Այվազովսկու հիշատակին», Ս. Պետերբուրգ, 1900, էջ 16—23:

Քրդական եղանակներ: Ձայնագրեց Կոմիտաս վարդապետ (մեներգեր առանց նվագակցության): Մոսկվա, (1903). 12 էջ:

Գարուն ա: Ձայնագրեց և դաշնակեց (քառաձայն խառն խմբի համար) Կոմիտաս վարդապետ. (երգվեց առաջին անգամ հոգևոր ժողովրդական համերգում, ուրբաթ, ապրիլի 1-ին Թիֆլիսի Արտիստական Ընկ. թատրոնում):—«Տարազ», Թիֆլիս, 1905, № 11, էջ 137:

Նույնը տպագրված է «Սովետական Հայաստան» ամսապարտում, Երևան, 1949, № 9, էջ 17:

Հոյ Նազան: Հայ ժողովրդական պարերգ: Գրի առավ և դաշնակեց (արական եռաձայն խմբի համար) Կոմիտաս վարդապետ:—«Գեղարվեստ», Թիֆլիս, 1908, № 2, էջ 47—150:

Հայ ֆնար: Հավաքածու գեղջուկ երգերի: Գրի առավ և աշնակեց Կոմիտաս վարդապետ (№ 1—12), Փարիզ, [1907]. 5 էջ:

Կախարչի երգը: Ժողովրդական բանաստեղծություն, մշակված Լևոն Թումանյանի, ձայնագրեց Կոմիտաս վարդապետը (մեներգիսումը և դաշնամուր): Հրատարակություն «Հասկեր» մանկական ամսագրի, Թիֆլիս, 1908, 3 էջ:

Չեմ կրնա: Հայ ժողովրդական երգ: Գրի առավ և դաշնակեց (երգ և նվագ) Կոմիտաս վարդապետ: «Գեղարվեստ», Թիֆլիս, 1908, № 1, էջ 100:

Ախ մառալ ջան: Հայ գեղջուկ երգ: Գրի առավ և դաշնակեց (քառաձայն արական խմբի համար) Կոմիտաս վարդապետ: «Գեղունի», Վենետիկ, 1909, № 5, էջ 45:

Նույնը «Ամենուն տարեցույց»-ում, 1910, էջ 213:

Իմ շինարի: «Հայ քնար»-ից (1907). մեներգ և դաշնամուր, քառաձայն խումբ. գրի առավ Կոմիտաս վարդապետ: «Արագած», Նյու-Յորք, 1911, № 2, էջ 10:

Հայ գեղջուկ երգեր: Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ, № 1—22, մեներգ և դաշնամուր: Լայպցիգ, (1912), 30 էջ:

Նույնը հրատարակված է Կոմիտասյան խնամատար Հանձնաժողովի կողմից, Փարիզ, (Ա. Թ.):

Հայ գեղջուկ երգեր: Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ № 23—32: (Ձանազան խմբերի համար առանձին նվագակցության): Լայպցիգ, տպ. Բրեյտկոպֆ և Հերտել (1912). 41 (1) էջ:

Նույնը վերահրատարակված է Կոմիտասյան խնամատար Հանձնաժողովի կողմից: Փարիզ (Ա. Թ.):

Ով մեծասքանչ դու լեզու: Դաշնակեց Կոմիտաս վարդապետ: (Քառաձայն խառն խմբի համար): Կ. Պոլիս, 1912/23 հոկտեմբերի, տպագ. Օ. Արզուման. 6 էջ:

Նույնը վերահրատարակված է Վ. Սարգսյանի խմբագրությամբ. Ա շարք, № 31, Փարիզ, (Ա. Թ.):

Տե՛ր օղորմյա: Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ (քառաձայն խառն խմբի համար): «Ամենուն տարեցույցը» 1914, 1 էջ:

Երի երի երի ջան: (Գեղջուկ երգ): (Քառաձայն խառն

խմբի համար): (Այս երգը քաղված է Կոմիտասի հրատարակած Հայ գեղջուկի երգերի ժողովածուից՝ «Հայ քնար» ժողովածուից, որը լույս է տեսել Փարիզ, 1907: Արտատպվել Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ում, Կ. Պոլիս, 1915, 247—257:

Հայ ժողովրդական երաժշտություն. նոր շարք: Տետր Մ. Պարերգեր, գրի առավ և դաշնակեց դաշնամուրի համար Կոմիտաս վարդապետ: Հրատարակություն Կոմիտասյան «Հանձնաժողովի», Փարիզ, 1925, 14 (1) էջ:

Նույնը վերահրատարակված է Խ. Թոռյանի խմբագրությամբ: Մ.—Լ., 1934, 19 (1) էջ:

Նույնը վերահրատարակված է Երեան, Հայպետհրատ, 1946:

Հայ ժողովրդական երաժշտություն: Նոր շարք, տետր Գ. Սիփանա քաջեր» քայլերգ. ներդաշնակեց քառաձայն խառն խումբի համար Կոմիտաս վարդապետ: Փարիզ, 1928, 8 էջ: Խոսքերը՝ հայերեն և ֆրանսերեն):

Հայ ժողովրդական երաժշտություն: Նոր շարք, տետր Գ. Չորս մեներգ դաշնակի ընկերակցությամբ և չորս խմբերգ (acapella), գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ: Փարիզ, 1928. 12 էջ:

Հայ ժողովրդական երաժշտություն: Նոր շարք, տետր Ե. Մեներգեր և խմբերգեր: Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ: Փարիզ, 1930. 29 էջ:

Ժողովրդական երգեր: Ազգագրական ժողովածու, հայերեն նոտագրությունից փոխադրեց եվրոպականի, առաջաբանով և դիտողություններով, Սպիրիդոն Մելիքյան: Երեան, Պետհրատի երաժշտական սեկտոր, 1931, Առաջաբան 1—12, նոտաներ—105 էջ:

Հայ ժողովրդական երգեր, 1-ին սերիա, տետրակ առաջին, մեներգեր դաշնամուրի նվագակցությամբ: Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս: Երեան, Հայպետհրատի գեղ. հրատ. բաժ., 1932. 48 էջ:

Դաշնավորեալ երգեցողությունը Սրբոյ պատարագի Հա-

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ վասն միասեռ արա-
կան խմբի: Փարիզ, 1933, 73 էջ:

Հայ ժողովրդական երաժշտություն: Նոր շարք, տետր
2. Սիրերգեր և պարերգեր, երկսեռ խմբի համար: Հավա-
քեց և դաշնակեց Կոմիտաս վարդապետ. գրի առավ Վ. Սար-
գսյան: Փարիզ, Հրատարակութիւն Կոմիտասյան Հանձնա-
խմբի, 1933, էջ 12:

Հայ ժողովրդական երգեր, 1-ին սերիա, տետրակ երկ-
րորդ, խմբերգեր: Գրի առավ և ներդաշնակեց Կոմիտաս:
Երևան, Հայպետհրատ, 1934. 47 էջ:

Հայ ժողովրդական երգեր: 2-րդ սերիա, տետրակ առա-
ջին, մեններգներ: Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս: Երևան,
Պետհրատ, 1935. 47 էջ:

Մեներգներ դաշնամուրի նվագակցութեամբ: Խմբագրու-
թեամբ Խ. Թոռչյանի: Մ.—Լ., Պետական երաժշտական հրա-
տարակութիւն, 1935. 91 էջ:

Քելե, քելե: Քելեր ցուեր: Լուսնակն անուշ: Ախ, մարալ
ջան: Ես սարեն կուգայի: Այ աղջիկ (մեններգ): Աճեմյան
Գևորգ, «Հայերեն երգեր»: Անթիլիաս, 1937, (էջ 12—17).

Հայ ժողովրդական երաժշտութիւն: Նոր շարք, տետր է,
հարսանեկան խմբերգներ և զանազան մեններգներ: Հավա-
քեց և դաշնակեց Կոմիտաս վարդապետ: Փարիզ, հրատարա-
կութիւն Կոմիտասյան Հանձնաժողովի, 1937. 15 էջ:

Հայ ժողովրդական երգեր: Երկրորդ սերիա, տետր երկ-
րորդ, խմբերգեր: Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս: Երե-
ւան, Պետհրատ, 1937. 64 էջ:

Մեներգներ դաշնամուրի նվագակցութեամբ, խմբագրու-
թեամբ Խ. Վ. Թոռչյանի, Մոսկվա—Լենինգրադ, Պետական
երաժշտական հրատարակութիւն, 1939. 92 էջ:

Հայ ժողովրդական երաժշտութիւն: Նոր շարք, տետր Բ.
Չորս ժողովրդական երգ: Գրի առավ և դաշնակեց Կոմի-
տաս վարդապետ: Փարիզ, հրատարակութիւն Կոմիտասյան
Հանձնաժողովի, 1940. 12 էջ:

Հայ սրբազան երաժշտութիւն, տետր 2-րդ, Կոմիտաս:

Վարդապետի տաղք և ալեկութ Հայաստանյայց Առաքելական
Ս. Եկեղեցւոյ, ինը խմբերգ վասն բազմաձայն երկսեռ խմբի,
յոթ մեղեդի միաձայն առանց նվագարանի: Հրատարակու-
թիւն Կոմիտասյան Հանձնաժողովի, զարդագրութիւն Ռ. Շիշ-
մանյանի: Փարիզ, 1946 (1947). 20 էջ:

Ալագյազ (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշնա-
կեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 3 էջ:

Անտունի (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշնա-
կեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 5 էջ:

Երկինքն ամպել է (մեններգ և դաշնամուր), գրի առավ և
դաշնակեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 3 էջ:

Էս առուն. (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշնա-
կեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 3 էջ:

Խնկի ծառ (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշնա-
կեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 3 էջ:

Միծեռնակ (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշնա-
կեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 3 էջ:

Միրանի ծառ (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշ-
նակեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 3 էջ:

Կուռնկ (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշնակեց
Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 4 էջ:

Կուժն առա (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշ-
նակեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950, 3 էջ:

Հով արեւ (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշնա-
կեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 3 էջ:

Չինար Էս (մեններգ և դաշնամուր), գրի առավ և դաշ-
նակեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1950. 3 էջ:

Ազգագրական ժողովածու: Հայ ժողովրդական երգեր և
պարերգեր: Կազմեց Մ. Ղ. Աղայան, խմբագրեց Բ. Քուշ-
նարյան: Հատոր 2-րդ: Երևան, Հայպետհրատ, 1950. 176 էջ:

Կոմիտաս վարդապետի նորագոյն յոթանասուն անտիպ
երգերեն քառասուն ժողովրդական երգեր, դաշնավորեց Գո-
հարիկ Ղազարոսյան, Կ. Պոլիս, 1942—1947, տպարան կա-

Թողիկոսութեան հայոց Կիլիկիոյ, Անթեիական-Լիբանան, 1950-29 (2) էջ:

Հայ ժողովրդական երաժշտութիւն: Նոր շարք. Տետր Ը: Հայ շինականի երգեր: Հավաքեց և դաշնակեց Կոմիտաս վարդապետ, միասեռ և երկսեռ խմբի համար: Ձայնագրեց Վ. Սարգսյան, հրատարակութիւն Կոմիտասյան Հանձնաժողովի, Փարիզ, 1951. 10 էջ:

Գառուն ա (մեներգ և դաշնամուր), գրի առավ և դաշնակեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1953. 3 էջ:

Զինչ ու գինչ (մեներգ և դաշնամուր), գրի առավ և դաշնակեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1953. 3 էջ:

Կանչե կռունկ (մեներգ և դաշնամուր), գրի առավ և դաշնակեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1953. 3 էջ:

Չեմ կրնա (մեներգ և դաշնամուր), գրի առավ և դաշնակեց Կոմիտաս: Երևան, Հայպետհրատ, 1953. 3 էջ:

Ա՛յ սարեր, բարձր սարեր (մեներգ), դուկտոր Մելքոն Քրիշյան, Անթիլիաս—Լիբանան, 1955. (2 էջ):

Վեց երգ: Փոխադրութիւններ դաշնամուրի համար Ռ. Անդրիասյանի, խմբագրութեամբ Գ. Սառաջեի: Երևան, Հայպետհրատ, 1955. 35 էջ:

Տե՛ր, կեցո դու զհայս (քառաձայն խառն խմբի համար, դաշնամուրի ընկերակցութեամբ Վ. Սարգսյանի): Երգացանկ Արմենիա երգչախմբի, խմբագրող Վ. Սարգսյան, Ա. շարք, № 31 և 32: Փարիզ, (6 էջ):

Երկերի ժողովածու: [Խմբ. և ծանոթագր. Ռ. Ա. Աթայան]: Հտ. I, Եր., Հայպետհրատ, 1960, ՀՍՍՀ գիտ. ակադ. արվեստի ինստ-տ:

Հտ. 1. մեներգեր: 192 էջ:

Հտ. 2. խմբերգեր: 1965, 281 էջ:

ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԳԵՐԸ

(Այբբենական համառոտ ցանկ)

(Մ ե ն ե ր գ ե ր դ ա շ ն ա մ ու ր ի ն վ ա գ ա կ ց ա թ յ ա մ ր

Ալագյալ քարձր սարին:	Միրանի ծառ:
Ալագյալ սարն ամպել է:	Կանչե՛, կռունկ:
Ալ ալուղս (զուգերգ):	Կաքավի երգը:
Ախ, մարալ ջան:	Կռունկ:
Ամպելա կամար-կամար:	Կռունկ առա:
Անտունի:	Հաբրբան:
Գարուն:	Հոյ, Նազան իմ:
Գարուն ա, ձուն ա արել:	Հով արեք:
Գութանը հաց եմ բերում:	Մոկաց Միրզա:
Ես աղջիկ եմ:	Շախկըր-շուխկըր:
Ես սարեն կուգայի:	Շողեր ջան:
Երկինքն ամպել է:	Ողբերգ:
Զինչ ու գինչ:	Չեմ կրնա խաղա:
էս առուն:	Չինար ես:
էս գիշեր, լուսնակ գիշեր:	Ջուր կուգա վերին սարեն:
էրվում եմ:	Սար-սար:
էհ, էհ, յաման:	Տուն արի:
Լեռնային գագաթներ:	Քելեր, ցուեր:
Լուսնակը սարի տակին:	Քելե, քելե:
Խնկի ծառ:	Օրոր:
Պիծեռնակ:	

Խ մ ր ե ր գ ե ր

ա. ապագոված

Ալագյալ: Եռաձայն:

Ախ, մարալ ջան: Բառաձայն:

Աղոթք (Հարսանեկան երգերից): Քառաձայն:

Անձրեն եկավ: Քառաձայն:

Առավոտուն բարի լուս: Քառաձայն, տենորի մենակատար-
ցութեամբ:

Առնեմ երթամ իմ յարը: Քառաձայն:

Արևը կայնե կեսօր: Քառաձայն:

Գարուն: Վեցձայն:

Գնա, գնա. կցված է «Կուժն առա» քառաձայն խմբերգին:

Գութաներդ (Զիգ տու, քաշի): Քառաձայն:

Եկան Մոկաց հարսներ (Հարալո): Քառաձայն:

Երևան բաղ եմ արել: Եռաձայն:

Երի, երի, երի ջան: Քառաձայն:

Երկրագործի երգը:

Զար զընկը: Քառաձայն:

Էս գիշեր, լուսնակ գիշեր: Քառաձայն:

Էսօր ուրբաթ է: Քառաձայն:

Էրվում եմ: Քառաձայն, արական:

Իմ չինարի յարը: Մեներգ-խմբերգ դաշնամուրի ընկերակ-
ցութեամբ:

Իմ չինար յարին: Հինգձայն:

Ինչո՞ւ Բինգյուլը մտար: Քառաձայն:

Լուսնակն անուշ: Քառաձայն, տենորի մենակատարումով:

Խնկի ծառ: Եռաձայն:

Խուճար: Քառաձայն, սոպրանոյի մեներգամբ:

Միրանի ծառ: Եռաձայն, տենորի մենակատարմամբ:

Կալի երգը: Քառաձայն, տենորի մենակատարումով:

Կանաչ արտը ման եկա: Քառաձայն:

Կատակ: Քառաձայն:

Կաքավի երգը: Միաձայն խմբերգ:

Կուժն առա: Քառաձայն:

Հինգ էժ ոսնեմ: Եռաձայն:

Հոյ, Նազան իմ: Եռաձայն:

Հով լինի: Քառաձայն, տենորի մենակատարումով:

Հովն անուշ: Քառաձայն, արական:

Մաղթանք (Հարսանեկան երգերից): Հինգձայն:

Մեր բաղը ծառ ա: Եռաձայն:

Յար ջան, արի: Քառաձայն:

Շխկըր-շուխկըր: Հինգձայն:

Շողեր ջան: Եռաձայն:

Շորորա, անուշ: Քառաձայն:

Շուրջար: Քառաձայն:

Ջուր կուգա վերին սարեն: Քառաձայն:

Սարեն ելավ երկու մուխ: Քառաձայն:

Սարեն կուգա ջուխտըմ խոշ: Քառաձայն իգական:

Սարերի վրով գնաց: Քառաձայն:

Սիփանա քաջեր: («Լո-լո»): Բազմաձայն:

Սոնա յար: Բազմաձայն:

Սուսան սմբուլ: Քառաձայն, սոփորաբար կցվում է «Ինչո՞ւ
Բինգյուլը մտար» երգին:

Փափուրի ջան: Հինգձայն:

Փեսին արդ ու դարդը: Քառաձայն:

Փեսին գովքը: Քառաձայն:

Քաղհան: Քառաձայն:

Քելեր, ցուր: Եռաձայն:

Օրոր ադինո: Քառաձայն:

բ. անտիպ

Ալագյազ աչերդ: Քառաձայն:

Ալագյազ սարն ամպել ա: Եռաձայն, իգական կազմի համար:

Ահա ծագեց կարմիր արև: Եռաձայն:

Ամպել ա, ձյուն չի գալի: Քառաձայն:

Այ աղջիկ, ծամով աղջիկ: Քառաձայն:

Այ տղա, մեր գեղեցի: Քառաձայն, իգական խմբի համար:

Առավոտ լուսաբեր: Քառաձայն:

Առնեմ երթամ էն սարը: Քառաձայն:

Բաղի պատը: Քառաձայն:

Ելեք, տեսեք դուրը: Քառաձայն:

Եկեք, քեզ ինչ է կերի զինչ: Քառաձայն:
 Ես լսեցի («Երազ»): Եռաձայն:
 Երկնուց գետնուց: Քառաձայն:
 Էս առուն: Բազմաձայն:
 Թող բլբուլ չերգե: Արական ձայների համար:
 Կայնե՛լ ես, կանչում էլ չես: Քառաձայն:
 Հո յաման ու յար ջան: Քառաձայն:
 Հոյ իմ նազանի յարը: Քառաձայն:
 Հով, հով, հով լինի: Քառաձայն, արական ձայնի համար:
 Մայր Արաքսի ափերով: Եռաձայն, իգական խումբ և տենոր:
 Մեր դռանը խնկի ծառ: Խմբերգ, արական կազմի համար:
 Մի յար ունեմ: Երկձայն, արական կամ երկձայն իգական
 կազմի համար:
 Նա լույս էր: Քառաձայն:
 Նանիկ-նանանիկ: Խմբական պարերգ, խառը խմբի համար:
 Ոհ, ինչ անուշ: Քառաձայն:
 Ոհ, ինչ քաղցր բան
 Զինար ես: Խմբերգ:
 Զրադացս մանի, մանի: Խառը խմբի համար:
 Վայ էն աղգին: Երկձայն:
 Վարդ, զքե չեմ սիրի: Եռաձայն:

Պարեր դաշնամուրի համար:
 Պատարագ: Փարիզ, 1933:
 Տաղեր և ալելուներ: Փարիզ, 1946:

Ս. Գասպարյան, Կոմիտաս: 1961, էջ 217:

ԿՈՄԻՏԱՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ
 (Համառոտ ցանկ)

Հայոց եկեղեցական եղանակները: Ստորագրված է Սո-
 ղոմոնյան Սողոմոն:—«Արարատ», էջմիածին, 1894, № 7,
 էջ 222—227, № 8, էջ 256—260:



«Հազարամյա մեր հանճար...»
 Գործ Փ. Քերիմեզյանի

Նույնը լույս է տեսել «Հայրենիք» օրաթերթում, Կ. Պոլիս, 1894, № 896, էջ 2, № 897, էջ 2 և № 922, էջ 1—2:

Հայոց եկեղեցական երաժշտությունը ժԹ դարում:—«Արարատ», Վաղարշապատ, 1897, № 5, էջ 221—225 (Հոգևածը մենացել է անավարտ):

Տասն և վեց ձայն երգեցողություն պատարագի:—«Արարատ», 1897, Վաղարշապատ, № 2, փետրվար, էջ 64—65:

Մի համեստ բանագող:—«Արարատ», Վաղարշապատ, 1901, № 4, էջ 228—229:

Հովսեփ Վերդի: 1813—1901:—«Տարազ», 1904, № 23, հոկտեմբեր 10, էջ 208—209:

Վագներ Ռիխարդ: (Համառոտ կենսագրական ակնարկ):—«Տարազ», Թիֆլիս, 1904, № 8, էջ 56—57:

Ֆրանց Լիստ: (Կենսագրական ակնարկ):—«Տարազ», Թիֆլիս, 1904, մայիսի 16, № 19, էջ 173—174:

Հայ ժողովրդական և եկեղեցական երգերը: ՄԱյրիլի 6-ին Հովնանյան դպրոցի դահլիճում Կոմիտասի կարգացած դասախոսությունը՝ Ազգային երաժշտության մասին: Ստորագրված է՝ Տիգրան Զավենի:—«Մշակ», Թիֆլիս, 1905, № 65, էջ 1, № 66, էջ 2:

Նույնը տպագրված է «Անդաստան հայ մտքի», Կահիրե, 1946, էջ 1—5:

Հայ գեղջուկ երաժշտություն: Ժողովրդական երգերի ծավալումը և աղղեցությունը:—«Անահիտ», Փարիզ, 1907, № 3—5, էջ 70—73, № 6—9, էջ 127—130:

Հայ գեղջուկ պարը: «Թատրոն և երաժշտություն», Բաքու, 1910, № 3—4, էջ 26—27, № 5—6, էջ 51—52:

Շառլանի խաղերու նշանակությունը:—«Տաճար», Կ. Պոլիս, 1910, № 10, էջ 311:

Աշուն օր (Զափածո), Թիֆլիս, 26 հոկտեմբերի, 1905 թ.: (Օրիորդի մը արքումեն արտագրված): «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1911, էջ 149:

Հայն ունի ինքնուրույն երաժշտություն:—«Ազատամարտ», Կ. Պոլիս, 1913, № 1316, էջ 2:

Վագներ Ռիխարդ: (Ծննդյան 100-ամյակի առթիվ, 1904 թվի գրված հոդվածի արտատպությունը):—«Տարազ», Թիֆլիս, 1913, № 5—6, էջ 82—84:

Լոռու գոթաներգը Վարդաբլուր գյուղի ոճով:—«Նավասարդ», Կ. Պոլիս, 1914, էջ 312—336:

Հայ երաժշտության հաղթանակը: (Կոմիտասի զրույցը «Ազատամարտ» օրաթերթի թղթակցի հետ):—«Ազատամարտ», Կ. Պոլիս, 1914, № 1557, էջ 1:

Բժշկություն երաժշտությամբ: (Մեկ էջ Մայր աթոռ Ս. էջմիածնի 2359 համար ձեռագրեն): «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1915, էջ 242—246:

Ազգային վիճակը: «Հայ միտքը երեկ և այսօր» բաժնում: «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1916—1920, էջ 61:

Սիրե բնությունը: (Արձակ բանաստեղծություն, գրված մանուկ Վահագն Զիթճյանի մկրտության առթիվ տրված ճաշասեղանից հետո՝ իբր խրատական: Գրել է 1910 թ. հոկտեմբերին Աղեքսանդրիայում, արտատպված է Պ. Վահագն Զիթճյանի ալբոմից): Աճեմյան, «Եփպատհայ տարեցույց», Աղեքսանդրիա, 1926, էջ 163:

Պարն ու մանուկը: (Դասախոսություն Կոմիտասի 1912 թվի ամռան Նսայան վարժարանում): «Ամենուն տարեցույցը», Փարիզ, 1928, էջ 478—484:

Կոմիտաս վարդապետի ինքնակենսագրությունը: (Գրել է 1908 թ. հունիսի 24-ին էջմիածնում. իր սեփական ձեռագիրն է):—«Անահիտ», Փարիզ, 1931, № 1—2, էջ 2—6:

Հայկական պատարագը և Կոմիտաս վարդապետը: (Կոմիտասի տ. Վահրամ եպիսկոպոս Մանկունուն Բեռլինից, 1907 թ. հոկտեմբերի 23-ին գրած նամակը Ս. Պատարագի եռաձայն երգեցողության վերասրբագրման մասին):—«Անահիտ», Փարիզ, 1933, № 3—6, էջ 228—230:

Հայ գեղջուկ երաժշտություն:—«Անահիտ», Փարիզ, 1935, № 6, էջ 27—29, 1936, № 1—2, էջ 41—48, № 4, էջ 1—22:

Հայ եկեղեցական երաժշտություն:—«Սիոն», Երուսաղեմ, 1935:

Կոմիտասի նամակը դերասանուհի Սիրանուշին:—«Գրական թերթ», Երևան, 1936, 10 ապրիլի:

Կոմիտաս վարդապետի ոտանավորները: (24 հատ: Ներածությունը Ա. Զոպանյանի):—«Անահիտ», Փարիզ, 1939, № 3, էջ 4—10:

Կոմիտասի նամակները Հովհ. Թումանյանին («Անուշ» պոեմը օպերայի վերածելու առթիվ, գրված 1908 թվականին էջմիածնից):—«Սովետական Հայաստան», Երևան, 1940, 22 հոկտեմբերի:

Կոմիտաս վարդապետ: Վեհափառ Հայրապետի Ամենայն հայոց Տ. Տ. Մաթեոս Բ-ի (Դիմում-հրաժարական՝ էջմիածնի Մայր Աթոռի միաբանությունից արձակվելու հարցի մասին):—«Սովետական Հայաստան», Երևան, 1940, 22 հոկտեմբերի:

Տե՛ս Թեյմուրջյան Ն. Կոմիտաս: Բիբլիոգրաֆիա: Եր., 1957, էջ 25.

Գ Ր Ք Ե Ր

Կոմիտաս: Հայ գեղջուկ պարը: Բաբու, 1910. 15 էջ:

Կոմիտաս: Ձեռաց տետրակ հայ սրբազան և գեղջուկ համերգի: Խմբ. համառոտ ներած. Կոմիտաս վարդապետ: Աղեքսանդրիա, 1911. 42 էջ:

Կոմիտաս: Ձեռաց տետրակ հայ գեղջուկ համերգի, դեկավարությամբ Կոմիտասի և սիրահոժար մասնակցությամբ իր 300 երկսեռ երգիչների խմբի: Համառոտ ներածություն Կոմիտասի: Կ. Պոլիս, տպարան Հովակիմյան, 1911. 40 էջ:

Կոմիտաս, 1913 թ., մայիսի 13 (25)-ի համերգը. հայ գեղջուկ երգերի համառոտ ամփոփումը: Կ. Պոլիս, տպարան, «Շանթ», 1913. 8 էջ:

Կոմիտաս: Փոխան առաջաբանի: «Կիլիկիա, երգարան» գրքում: Կ. Պոլիս, 1921, էջ 5—8:

Կոմիտաս վարդապետ: Հայ գեղջուկ երաժշտություն:

այ եկեղեցական ու ժողովրդական երաժշտության հատանիշները,— օտար երաժշտության ազդեցությունը հայ եկեղեցական ու աշուղական երաժշտության վրա: Հայ եկեղեցվո առգգանության նշանները: Առաջաբան Արշակ Զոպանյանի, Հրապարակություն Կոմիտասյան Հանձնաժողովի: Փարիզ, 1925. 6 էջ:

Կոմիտաս: Հայ գեղջուկ երաժշտություն: Առաջաբան՝ Ա. Զոպանյանի: Փարիզ, Կոմիտասյան հանձնաժողով, 1938. 69 էջ:

Կոմիտաս: Քնարերգություններ: Ներած. Թ. Ազատյանի:

Կ. Պոլիս, «Մշակույթ» գրատուն, 1939. 72 էջ:

Կոմիտաս: Հոդվածներ և ուսումնասիրություններ: Կազմ. Բ. Թերլեմեզյան: Եր., Պետհամալսարան, 1941. 200 էջ:

Կոմիտաս: Հայ ժողովրդական և եկեղեցական երգերը: «Անդաստան հայ մտքի» գրքում: Կահիրե, 1946, էջ 1—5:

Կոմիտաս: Ձեռաց տետրակ հայ գեղջուկ համերգի... Կ. Պոլիս, (Ա. Թ.), 40 էջ:

ՍՐՏԱԲՈՒՆ ԵՐԳԵՐ — ԿՈՄԻՏԱՍԻՆ

Դ. ԶԱՐԵՆՑ

Կ ո մ ի տ ա ս ի ն ա մ ա Ր
(Հատվածներ)

Ա

Հայրենի երգն ես դու մեր՝
Վերադարձած հայրենիք:—
Դեմքիդ՝ տանջանք ու հուրեր
Եվ հանճարի կնիք ջեռ:
Ժողովրդի իմ անմահ
Ձա՛ղնն ես՝ դարե՛ր տարագիր —
Որ գտանում ես հիմա
Ե՛վ ժողովուրդ, և՛ երկիր:—

Դու աշխատանքն ես երգել
 Եվ արորը մաճկալի,
 Անջուր դաշտեր և հերկեր
 Եվ սիրո վերք անձկալի,—
 Դու պանդուխտի տարագիր
 Սիրտն ես երգել կարոտող՝
 Անհայրենիք արագիլ
 Կապված հուշի նարոտով...

Զ

Դու երգել ես միայն ճորտ
 Ժողովրդի սրտի մեջ
 Մնված ցնորքն անհողդողդ
 Իր գալիքի մասին վես.
 Հայրենիքի մասին նոր,
 Կյանքի, որ հողդ ազատ,
 Մնվելու է արյունով
 Եվ զոհերով սրբազան...

ՄԷ

Օ, վարդապետ անվեղար,
 Որ խաչի տեղ վրդովիչ —
 Ձայնի հովիվ լոկ եղար,
 Ձեռքիդ՝ սրինգ մի թովիչ:—
 Եվ աղոթքի փոխարեն
 Խնկեցիր երգող լոկ վես —
 Դեպի երկինք մի բյուրեղ՝
 Ժողովրդիդ սիրտը մեծ:

Կրիադադվի վերջապես
 Խոնջած աճյունը քո հար—
 Դարձած մոխիր կենսաբեր,
 Դարձած ավյուն, դարձած քար...
 Հայրենացած, սրբացած՝
 Կապրի ողիղ հմայող՝
 Դարձած ելնող երգի ձայն
 Եվ հայրենի դարձած հող...

«Ընտիր երկեր»: Եր., Հայպետհրատ, 1953,
 էջ 284—290:

Պ. ՍԵՎԱԿ

Դո՛ւ—Վարդապե՛տ:

Դու Ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,
 Դո՛ւ՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
 Դիրն ու տառն ես Հայոց երգի:
 Հայոց երգի
 Անձիր հերկի
 Ե՛վ ալոսն ու խորունկ առն ես,
 Ե՛վ մատընտիր սերմը նրա,
 Ե՛վ խոստումը գալիք բերքի...

Եվ ծիրանի մեր այն ծառն ես,
 Որ ինչքան էլ ճղակոտոր՝
 Շտկըվել է և բարձր տվել,
 Ու... մեր դարդը իրար տվել...

Եվ հայրենի այն ծիծառը,
 Որ հավիտյան բույն է դրել
 Մեր հոգու մեջ:
 Մեր կիսավեր ու դեռ կանգուն տաճարների

Ու մեր երկնի գմբեթի տակ...

Դու՝ մեր տավիղ,

Եվ քո լարը

Մինչև անգամ և հատվելիս

Հայերեն է նորից ճնգում:

Դու՝ մեր սրտի ձայնալարը,

Մինչև անգամ վհատվելիս

Հայերեն ես դարձյալ տնքում...

Դու ես քարը

Եվ սրբատաշ մեր պատշարը.

Հացը օրվա

Եվ նեղ ժամի մեր պաշարը.

Մեր փակ հոգին, բաց աշխարհը,

Սրբագործված մեր նշխարը.

Եվ մեր ճարը՝

Օտարամուտ ախտի դիմաց.

Խնկածավալ մեր տաճարը՝

Օտարահոտ աղտի դիմաց.

Վերադարձի մեր պատճառը՝

Մեր հարկադիր գաղթի դիմաց.

Համահավաք մեր հանճարը՝

